

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

►B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2006 թվականի մայիսի 17-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր (օրենքով նախատեսված) աուդիտի մասին 2006/43/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ, որով փոփոխություններ են կատարվում Խորհրդի 78/660/ԵՏՀ և 83/349/ԵՏՀ հրահանգներում, և ուժը կորցրած է ճանաչվում 84/253/ԵՏՀ հրահանգը

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(ՊՏ L 157, 09.06.2006թ., էջ 87):

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		թիվ	էջ	ամսաթիվ
►M1	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 L 81 թվականի մարտի 23-ի 2008/30/ԵՀ հրահանգով	81	53	20.03.2008թ.

▼B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2006 թվականի մայիսի 17-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր (օրենքով նախատեսված) աուդիտի մասին 2006/43/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ, որով փոփոխություններ են կատարվում Խորհրդի 78/660/ԵՏՀ և 83/349/ԵՏՀ հրահանգներում, և ուժը կորցրած է ճանաչվում 84/253/ԵՏՀ հրահանգը

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 44(2)(Է) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը (1),

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (2),

Քանի որ

- 1) ներկայումս «Որոշակի տեսակի ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1978 թվականի հուլիսի 25-ի 78/660/ԵՏՀ Չորրորդ

հրահանգը (3), «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1983 թվականի հունիսի 13-ի 83/349/ԵՏՀ Յոթերորդ հրահանգը (4), «Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1986 թվականի դեկտեմբերի 8-ի 86/635/ԵՏՀ հրահանգը (5) ու «Ապահովագրական կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 19-ի 91/674/ԵՏՀ հրահանգը (6) պահանջում են, որ տարեկան ֆինանսական հաշվետվությունները կամ համախմբված ֆինանսական հաշվետվությունները աուդիտի ենթարկվեն նման աուդիտ անցկացնելու լիազորություն ունեցող մեկ կամ ավելի անձանց կողմից,

- 2) պարտադիր աուդիտ անցկացնելու համար պատասխանատու անձանց հաստատման պայմանները սահմանվել են «Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պարտադիր աուդիտ անցկացնելու համար պատասխանատու անձանց հաստատման մասին» Խորհրդի 1984 թվականի ապրիլի 10-ի 84/253/ԵՏՀ Ութերորդ հրահանգում (7),
- 3) Համայնքում պարտադիր աուդիտի նկատմամբ ներդաշնակ մոտեցման բացակայությունը պատճառ դարձավ, որ Հանձնաժողովը 1998 թվականի «Պարտադիր աուդիտը Եվրոպական միությունում. Առաջընթացի ճանապարհ» իր Հաղորդագրությունում (8) առաջարկեց ստեղծել Աուդիտորական կոմիտե, որը կարող էր հետագա գործունեություն ծավալել՝ հաշվապահություն մասնագիտության ներկայացուցիչների և անդամ պետությունների հետ սերտ համագործակցությամբ,
- 4) այդ Կոմիտեի աշխատանքի հիման վրա 2000 թվականի նոյեմբերի 15-ին Հանձնաժողովը Առաջարկություն ներկայացրեց «Եվրոպական միությունում պարտադիր աուդիտի որակի ապահովման համար անհրաժեշտ նվազագույն պահանջների մասին» (9), իսկ 2002 թվականի մայիսի 16-ին՝ Առաջարկություն «Եվրոպական միությունում պարտադիր աուդիտ իրականացնող անձանց անկախության մի շարք հիմնարար սկզբունքների մասին» (10),
- 5) սույն Հրահանգի նպատակը պարտադիր աուդիտի վերաբերյալ պահանջների բարձր մակարդակով (բայց ոչ լիակատար) ներդաշնակեցումն է: Պարտադիր աուդիտ պահանջող անդամ պետությունը կարող է սահմանել ավելի խիստ պահանջներ, եթե այլ բան նախատեսված չէ սույն Հրահանգով,
- 6) պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կողմից սույն Հրահանգի հիման վրա ձեռք բերված աուդիտորական որակավորումները պետք է համարժեք համարվեն: Հետևաբար, անդամ պետությունների համար այլևս չպետք է հնարավոր լինի պահանջել, որ աուդիտորական կազմակերպությունում ձայնի իրավունքների մեծամասնությունը պատկանի տվյալ պետության կողմից հաստատված աուդիտորներին, կամ որ աուդիտորական կազմակերպության վարչական կամ կառավարման մարմնի անդամների մեծամասնությունը պետք է տվյալ անդամ պետության կողմից հաստատված լինի,
- 7) պարտադիր աուդիտը պահանջում է այնպիսի թեմաների վերաբերյալ համապատասխան գիտելիքներ, ինչպիսիք են ընկերությունների իրավունքը, հարկաբյուջետային իրավունքը և սոցիալական ապահովության իրավունքը: Այդ գիտելիքները պետք է ստուգվեն նախքան մեկ այլ անդամ պետության՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձի հաստատումը,
- 8) երրորդ անձանց իրավունքները պաշտպանելու համար բոլոր հաստատված աուդիտորները և աուդիտորական կազմակերպությունները պետք է գրանցվեն

մատյանում, որը մատչելի է հասարակության համար և հիմնական տեղեկություններ է պարունակում պարտադիր աուդիտ իրականացնող անձանց ու աուդիտորական կազմակերպությունների մասին,

- 9) պարտադիր աուդիտ իրականացնող անձինք պետք է պահպանեն էթիկայի ամենաբարձր ստանդարտները: Հետևաբար նրանք պետք է ենթարկվեն մասնագիտական էթիկայի նորմերին, որոնք առնվազն վերաբերում են նրանց՝ հանրային շահին ուղղված գործառնություն, ազնվությանը և անաչառությանը, ինչպես նաև մասնագիտական ունակությանն ու անհրաժեշտ զգուշությանը: Պարտադիր աուդիտ իրականացնող անձանց՝ հանրային շահին ուղղված գործառնությամբ նշանակում է, որ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց աշխատանքի որակի վրա մարդկանց և հաստատությունների առավել լայն շրջանակ է հիմնվում: Աուդիտի բարձր որակը նպաստում է շուկաների կանոնավոր գործունեությանը՝ բարձրացնելով ֆինանսական հաշվետվությունների անթերիությունը և արդյունավետությունը: Հանձնաժողովը կարող է մասնագիտական էթիկայի վերաբերյալ կիրարկող ակտեր ընդունել՝ որպես նվազագույն չափանիշներ: Նման կերպ գործելիս Հանձնաժողովը կարող է հաշվի առնել Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի՝ էթիկայի կանոնագրքում զետեղված սկզբունքները,
- 10) կարևոր է, որ պարտադիր աուդիտ իրականացնող անձինք և աուդիտորական կազմակերպությունները պահպանեն իրենց հաճախորդների գաղտնիության իրավունքը: Հետևաբար, նրանք պարտավոր են հետևել գաղտնիության և մասնագիտական գաղտնիքի խիստ նորմերին, որոնք, այնուամենայնիվ, չպետք է խոչընդոտեն սույն Հրահանգի պատշաճ կատարումը: Գաղտնիքի պահպանման այդ նորմերը պետք է կիրառվեն նաև պարտադիր աուդիտ իրականացնող այն անձի կամ աուդիտորական կազմակերպության նկատմամբ, որն այլևս ներգրավված չէ աուդիտորական որևէ հատուկ առաջադրանքի կատարման մեջ,
- 11) պարտադիր աուդիտ իրականացնող անձինք և աուդիտորական կազմակերպությունները պարտադիր աուդիտին իրականացնելիս պետք է անկախ լինեն: Նրանք աուդիտի ժամանակ ծագող խնդիրների մասին կարող են տեղեկացնել աուդիտի ենթարկվող անձին, բայց պետք է ձեռնպահ մնան աուդիտի ենթարկվող անձի որոշումների ընդունման ներքին գործընթացին մասնակցելուց: Եթե նրանք հայտնվում են այնպիսի իրավիճակում, երբ նրանց անկախությանը սպառնացող վտանգները չափազանց զգալի են՝ նույնիսկ այդ սպառնալիքները մեղմացնող երաշխիքների կիրառումից հետո նրանք պետք է պաշտոնաթող լինեն կամ ձեռնպահ մնան աուդիտ անցկացնելու պայմանավորվածությունից: Աուդիտորի և աուդիտի ենթարկվող անձի միջև հարաբերությունների դեպքում եզրակացությունն այն մասին, որ առկա են աուդիտորի անկախությանը սպառնացող հարաբերություններ, կարող է տարբեր լինել ցանցի և աուդիտի ենթարկվող անձի միջև հարաբերությունների մասին եզրակացությունից: Եթե ազգային դրույթների համաձայն՝ 2(14) հոդվածում նշված կոռուպտիվից կամ 86/635/ԵՏՀ հրահանգի 45-րդ հոդվածում նշված նմանատիպ հաստատությունից պահանջվում կամ դրանց թույլատրվում է անդամակցել շահույթ չհետապնդող աուդիտ իրականացնող ընկերության, անաչառ, ողջամիտ և տեղեկացված անձը չի կարող եզրակացնել, որ անդամակցության վրա հիմնված այդ հարաբերությունները սպառնում են պարտադիր աուդիտ իրականացնող անձի անկախությանը՝ պայմանով, որ երբ այդ աուդիտորական կազմակերպությունն իր անդամներից մեկի պարտադիր աուդիտ է անցկացնում, անկախության սկզբունքները կիրառվում են աուդիտն անցկացնող աուդիտորների և պարտադիր աուդիտի վրա ազդեցություն ունենալու հնարավորություն ունեցող անձանց նկատմամբ: Պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության անկախությանը սպառնացող վտանգների

օրինակներ են աուդիտի ենթարկվող անձի հետ կապված ուղղակի կամ անուղղակի ֆինանսական շահը և լրացուցիչ ոչ աուդիտորական ծառայությունների մատուցումը: Բացի դրանից՝ աուդիտի ենթարկվող մեկ անձից ստացված վճարների չափը և (կամ) կառուցվածքը կարող են սպառնալ պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության անկախությանը: Այդ սպառնալիքները մեղմացնելու կամ վերացնելու համար կիրառվելիք երաշխիքների տեսակները ներառում են արգելքներ, սահմանափակումներ, այլ քաղաքականություններ ու ընթացակարգեր և բացահայտում: Պարտադիր աուդիտ իրականացնող անձինք և աուդիտորական կազմակերպությունները պետք է հրաժարվեն որևէ լրացուցիչ ոչ աուդիտորական այնպիսի ծառայություններ մատուցելուց, որոնք սպառնում են նրանց անկախությանը: Հանձնաժողովը կարող է անկախության վերաբերյալ կիրարկող ակտեր ընդունել՝ որպես նվազագույն չափանիշներ: Նման կերպ գործելիս Հանձնաժողովը կարող է հաշվի առնել վերը նշված՝ 2002 թվականի մայիսի 16-ի Առաջարկությունում պարունակվող սկզբունքները: Աուդիտորների անկախությունը սահմանելու համար այն «ցանցի» հասկացությունը, որտեղ գործում են աուդիտորները, պետք է հստակ լինի: Այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել տարբեր հանգամանքներ, ինչպես, օրինակ, այն դեպքերը, երբ կառուցվածքը կարող է սահմանվել որպես ցանց, քանի որ այն ուղղված է շահույթի կամ ծախսերի բաշխմանը: Այն չափանիշները, որոնք մատնանշում են ցանցի առկայությունը, պետք է գնահատվեն և կշռվեն գոյություն ունեցող բոլոր փաստացի հանգամանքների հիման վրա, ինչպես, օրինակ, մշտական ընդհանուր հաճախորդների առկայությունը,

- 12) եթե անհրաժեշտ է երաշխավորել պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության անկախությունը ինքնավերստուգման կամ անձնական շահի առկայության դեպքերում, անդամ պետությունը և ոչ թե պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական ընկերությունն է որոշում կայացնում, թե արդյոք աուդիտորը կամ աուդիտորական կազմակերպությունն իր աուդիտորական հաճախորդների առումով պետք է հրաժարական տա կամ ձեռնպահ մնա աուդիտ իրականացնելու պայմանավորվածությունից: Այնուամենայնիվ, դա չպետք է հանգեցնի այնպիսի իրավիճակի, երբ անդամ պետությունների ընդհանուր պարտավորությունը պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպությունների կողմից իրենց աուդիտորական հաճախորդներին ոչ աուդիտորական ծառայություններ մատուցելը խոչընդոտելն է: Այն գործոնները, որոնք պետք է հաշվի առնվեն՝ ինքնավերստուգման կամ սեփական շահի առկայության դեպքերում որոշելու համար, թե արդյոք նպատակահարմար է, որ պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունն իրենց իսկ անկախությունը երաշխավորելու նպատակով պարտադիր աուդիտ չանցկացնեն, պետք է ներառեն այն հարցը, թե արդյոք աուդիտի ենթարկվող հանրային մասնակցությամբ կազմակերպությունը թողարկել է փոխանցելի արժեթղթեր, որոնք վաճառքի են հանվել կարգավորվող շուկաներում՝ «Ֆինանսական գործիքների շուկայի մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/39/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածի 14-րդ կետի իմաստով (11),
- 13) կարևոր է հետևողականորեն ապահովել Համայնքի օրենսդրությամբ պահանջվող բոլոր պարտադիր աուդիտների բարձր որակը: Հետևաբար, բոլոր պարտադիր աուդիտները պետք է անցկացվեն աուդիտի միջազգային ստանդարտների հիման վրա: Համայնքում այդ ստանդարտները կիրարկող ակտերը պետք է ընդունվեն՝ համաձայն Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը սահմանող Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշման(12): Աուդիտի բոլոր միջազգային ստանդարտների տեխնիկական համապատասխանությունը գնահատելիս Հանձնաժողովին պետք է

աջակցի աուդիտի հարցերով տեխնիկական կոմիտեն կամ խումբը, որը նաև պետք է ներառի անդամ պետությունների հասարակական վերահսկողության մարմինների համակարգը: Ներդաշնակեցման առավելագույն մակարդակի հասնելու համար անդամ պետություններին պետք է թույլատրել լրացուցիչ ազգային աուդիտորական ընթացակարգեր և պահանջներ սահմանել, եթե միայն դրանք բխում են տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի ոլորտին առնչվող հատուկ ազգային իրավական պահանջներից, ինչը նշանակում է, որ այդ պահանջները չեն կարգավորվել ընդունված աուդիտի միջազգային ստանդարտներով: Անդամ պետությունները կարող են պահպանել այդ լրացուցիչ ազգային աուդիտորական ընթացակարգերը, քանի դեռ աուդիտորական ընթացակարգերը կամ պահանջները կարգավորված չեն հետազայում ընդունված աուդիտի միջազգային ստանդարտներով: Այնուամենայնիվ, եթե ընդունված աուդիտի միջազգային ստանդարտներում այնպիսի աուդիտորական ընթացակարգեր են ներառված, որոնց իրականացումը պարտադիր աուդիտի շրջանակներին առնչվող հատուկ ազգային պահանջներից բխող հատուկ իրավական հակասություն կառաջացնեն ազգային օրենսդրության հետ, անդամ պետությունները կարող են բացառել աուդիտի միջազգային ստանդարտի՝ ազգային օրենսդրությանը հակասող մասը, քանի դեռ այդ հակասությունը գոյություն ունի՝ պայմանով, որ կիրառվեն 26(3) հոդվածում նշված միջոցները: Անդամ պետությունների կողմից ցանկացած լրացում կամ բացառում պետք է բարձրացնի ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ վստահելիության մակարդակը և նպաստի հանրային բարօրությանը: Վերը նշվածը ենթադրում է, որ անդամ պետությունները կարող են, օրինակ, վերահսկիչ մարմին ներկայացվող լրացուցիչ աուդիտորական հաշվետվություն պահանջել կամ ազգային կորպորատիվ կառավարման կանոնների վրա հիմնված այլ հաշվետվական և աուդիտորական պահանջներ սահմանել,

- 14) որպեսզի Հանձնաժողովը Համայնքում կիրառման համար աուդիտի միջազգային ստանդարտ ընդունի, այն պետք է միջազգային մակարդակով լայնորեն ընդունված և մշակված լինի բոլոր շահագրգիռ կողմերի լիարժեք մասնակցությամբ՝ բաց և թափանցիկ ընթացակարգից հետո, ինչպես նաև պետք է բարձրացնի տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ վստահելիության մակարդակն ու որակը և նպաստի եվրոպական հանրային բարօրությանը: Միջազգային աուդիտի իրականացման վերաբերյալ զեկույց՝ որպես ստանդարտի մաս ընդունման անհրաժեշտությունը պետք է գնահատվի ըստ առանձին դեպքերի՝ համաձայն թիվ 1999/468/ԵՀ որոշման: Հանձնաժողովը պետք է ապահովի, որ մինչև ընդունման գործընթացն սկսելը, վերանայում է անցկացվում՝ ստուգելու համար, թե արդյոք այդ պահանջները բավարարվել են, և սույն Հրահանգի համաձայն ստեղծված Կոմիտեի անդամներին ուսումնասիրության արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնի,
- 15) համախմբված ֆինանսական հաշվետվությունների դեպքում կարևոր է, որ խմբի բաղկացուցիչ մասերի պարտադիր աուդիտ իրականացնող անձանց միջև պարտականությունների հստակ սահմանազատում լինի: Այդ նպատակով համալիր աուդիտ իրականացնող անձը պետք է լրիվ պատասխանատվություն կրի աուդիտորական հաշվետվության համար,
- 16) հաշվապահական հաշվառման նույն ստանդարտները կիրառող ընկերությունների միջև համեմատելիությունը բարձրացնելու համար և աուդիտի գործառույթի նկատմամբ հասարակության վստահությունը բարձրացնելու համար Հանձնաժողովը կարող է տարեկան ֆինանսական հաշվետվությունների ու համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար ընդհանուր աուդիտորական հաշվետվություն

ընդունել, որը պատրաստված է հաստատված հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հիման վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Համայնքի մակարդակով նման հաշվետվության համար համապատասխան ստանդարտ չի ընդունվել,

- 17) կանոնավոր ստուգումները լավ միջոց են՝ պարտադիր աուդիտի հետևողականորեն բարձր որակ ապահովելու համար: Հետևաբար, պարտադիր աուդիտ իրականացնող անձինք և աուդիտորական կազմակերպությունները պետք է ենթարկվեն որակի ապահովման այնպիսի համակարգի, որի կազմակերպումն անկախ է վերանայող պարտադիր աուդիտ իրականացնող անձանցից և աուդիտորական կազմակերպություններից: Որակի ապահովման համակարգերի մասին 29-րդ հոդվածի կիրառման նպատակով անդամ պետությունները կարող են որոշել, որ եթե անհատ աուդիտորները որակի ապահովման մեկ ընդհանուր քաղաքականություն են իրականացնում, պետք է հաշվի առնել միայն աուդիտորական կազմակերպություններին ներկայացվող պահանջները: Անդամ պետությունները կարող են որակի ապահովման համակարգն այնպես կազմակերպել, որ յուրաքանչյուր անհատ աուդիտոր որակի ապահովման վերանայման ենթարկվի առնվազն վեց տարին մեկ անգամ: Այդ առումով որակի ապահովման համակարգի ֆինանսավորումը պետք է զերծ լինի անհարկի ազդեցությունից: Հանձնաժողովը պետք է իրավասություն ունենա որակի ապահովման համակարգի կազմակերպմանը վերաբերող հարցերում և դրա ֆինանսավորման առումով կիրարկող ակտեր ընդունելու այն դեպքերում, երբ որակի ապահովման համակարգի նկատմամբ հասարակության վստահությունը լուրջ վտանգի տակ է: Որակի ապահովման վերանայման համակարգի նկատմամբ համակարգված մոտեցում գտնելու համար անդամ պետությունների հասարակական վերահսկողության համակարգերը պետք է խրախուսվեն՝ շահագրգիռ անձանց վրա անտեղի բեռ բարդելուց խուսափելու համար,
- 18) ստուգումները և համապատասխան պատժամիջոցներն օգնում են կանխարգելելու և ուղղելու պարտադիր աուդիտի ոչ պատշաճ իրականացումը,
- 19) պարտադիր աուդիտ իրականացնող անձինք և աուդիտորական կազմակերպությունները պատասխանատու են իրենց աշխատանքն անհրաժեշտ զգուշությամբ կատարելու համար և, հետևաբար, պետք է պատասխանատվություն կրեն՝ անհրաժեշտ զգուշության բացակայության հետևանքով պատճառված ֆինանսական վնասի համար: Այնուամենայնիվ, աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների անսահմանափակ ֆինանսական պարտավորությունների ենթակա լինելու փաստը կարող է ազդեցություն ունենալ մասնագիտական գործունեության ընթացքում վնասների դեմ ապահովագրություն ձեռք բերելու նրանց կարողության վրա: Հանձնաժողովն իր հերթին մտադիր է ուսումնասիրել այս հարցերը՝ հաշվի առնելով այն փաստը, որ անդամ պետությունների պատասխանատվության ռեժիմները կարող են զգալիորեն տարբերվել,
- 20) անդամ պետությունները պետք է ներազգային վերահսկողության համակարգի հիման վրա պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների համար հասարակական վերահսկողության արդյունավետ համակարգ կազմակերպեն: Հասարակական վերահսկողության կարգավորող միջոցառումները պետք է հնարավոր դարձնեն անդամ պետությունների վերահսկիչ գործունեության առումով Համայնքի մակարդակով արդյունավետ համագործակցությունը: Հասարակական վերահսկողության համակարգը ղեկավարվում է պրակտիկ գործունեությամբ չզբաղվող մասնագետների կողմից, որոնք բանիմաց են պարտադիր աուդիտին առնչվող ոլորտներում: Տվյալ մասնագետները կարող են լինել այնպիսի մասնագետներ, որոնք երբեք կապ չեն ունեցել աուդիտորական

մասնագիտության հետ, կամ նախկին պրակտիկ մասնագետներ, որոնք թողել են այդ մասնագիտությունը: Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են պրակտիկ գործունեությամբ զբաղվող փոքրաթիվ մասնագետների թույլ տալ ներառվել հասարակական վերահսկողության համակարգի կարգավորման գործընթացում: Անդամ պետությունների իրավասու մարմինները պետք է անհրաժեշտության դեպքում համագործակցեն միմյանց հետ՝ իրենց կողմից հաստատված պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ իրենց վերահսկողության պարտականությունները կատարելու նպատակով: Նման համագործակցությունը կարող է կարևոր ներդրում լինել Համայնքում պարտադիր աուդիտի բարձր որակի հետևողական ապահովման համար: Քանի որ անհրաժեշտ է ապահովել անդամ պետությունների կողմից նշանակված իրավասու մարմինների միջև եվրոպական մակարդակով արդյունավետ համագործակցություն և համակարգում, ապա դա ապահովելու համար մեկ կառույցի նշանակումը չպետք է հակասի յուրաքանչյուր առանձին մարմնի՝ անդամ պետությունների այլ իրավասու մարմինների հետ անմիջականորեն համագործակցելու հնարավորությանը,

- 21) հասարակական վերահսկողության սկզբունքների մասին 32(3) հոդվածի հետ համապատասխանությունն ապահովելու համար պրակտիկ գործունեությամբ չզբաղվող մասնագետը պարտադիր աուդիտին առնչվող ոլորտներում բանիմաց է համարվում կա՛մ իր նախկին մասնագիտական հմտությունների շնորհիվ, կա՛մ այլապես, 8-րդ հոդվածում թվարկված առարկաներից առնվազն մեկի վերաբերյալ ունեցած գիտելիքների շնորհիվ,
- 22) պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը պետք է նշանակվի աուդիտի ենթարկվող անձի բաժնետերերի կամ անդամների ընդհանուր ժողովի կողմից: Աուդիտորի անկախությունը պաշտպանելու համար կարևոր է, որ աշխատանքից հեռացումը հնարավոր լինի, եթե միայն հիմնավոր պատճառներ կան, և եթե այդ պատճառների մասին տեղեկացվում է հասարակական վերահսկողության համար պատասխանատու մարմնին կամ մարմիններին,
- 23) քանի որ հանրային մասնակցությամբ կազմակերպություններն ավելի բարձր տեսանելիություն ունեն և տնտեսապես ավելի կարևոր են, նրանց տարեկան և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել ավելի խիստ պահանջներ,
- 24) աուդիտորական կոմիտեները և ներքին վերահսկողության արդյունավետ համակարգն օգնում են նվազեցնելու ֆինանսական, գործառնական և պարտավորությունների կատարման ռիսկերն ու բարձրացնելու ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելու որակը: Անդամ պետությունները կարող են հաշվի առնել «Ցուցակված ընկերությունների գործադիր գործառույթներ չունեցող կամ վերահսկիչ տնօրենների դերի մասին և (վերահսկիչ) խորհրդի կոմիտեների մասին» Հանձնաժողովի 2005 թվականի փետրվարի 15-ի Առաջարկությունը (13), որը սահմանում է աուդիտորական կոմիտեների հիմնադրման ու գործունեության կարգը: Անդամ պետությունները կարող են սահմանել, որ աուդիտորական կոմիտեին կամ համարժեք գործառույթներն իրականացնող մարմնին վերապահված գործառույթները կարող են իրականացվել ընդհանուր առմամբ վարչական կամ վերահսկիչ մարմնի կողմից: Հաշվի առնելով 41-րդ հոդվածով աուդիտորական կոմիտեին վերապահված պարտավորությունները՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը չպետք է որևէ կերպ այդ կոմիտեի ստորադասը լինի,
- 25) անդամ պետությունները կարող են նաև որոշել աուդիտորական կոմիտե ունենալու պահանջից ազատել կոլեկտիվ ներդրումային ընկերություններ հանդիսացող՝ հանրային

մասնակցությամբ այն ընկերություններին, որոնց փոխանցելի արժեթղթերը վաճառքի են հանվում կարգավորվող շուկաներում: Այս տարբերակի դեպքում հաշվի է առնվում այն փաստը, որ եթե կոլեկտիվ ներդրումային ընկերությունը գործում է սոսկ ակտիվների հավաքագրման նպատակով, աուդիտորական կոմիտեի ծառայությունների վարձումը ոչ միշտ է նպատակահարմար: Ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու և դրան առնչվող ռիսկերը չեն կարող համեմատվել հանրային մասնակցությամբ այլ կազմակերպությունների ռիսկերի հետ: Բացի դրանից՝ փոխանցելի արժեթղթերով կոլեկտիվ ներդրումային ընկերությունները (ՓԱԿՆԸ) և դրանց կառավարող ընկերությունները գործում են խստորեն սահմանված կարգավորիչ միջավայրում և ենթակա են կառավարման հատուկ մեխանիզմների, ինչպես, օրինակ, իրենց դեպոզիտարիայի կողմից իրականացվող հսկողությունը: Այն կոլեկտիվ ներդրումային ընկերությունների համար, որոնք չեն համապատասխանեցվել 85/611/ԵՏՀ հրահանգով (14), բայց ենթակա են այդ հրահանգով նախատեսված համարժեք երաշխիքներին, անդամ պետություններին պետք է այդ մասնավոր դեպքում թույլատրեն դրանց նկատմամբ այնպիսի մոտեցում նախատեսել, որը համարժեք է Համայնքի համապատասխանեցված կոլեկտիվ ներդրումային ընկերությունների նկատմամբ մոտեցմանը,

- 26) հանրային մասնակցությամբ կազմակերպությունների աուդիտորների անկախությունն ուժեղացնելու համար այդ կազմակերպությունների աուդիտն իրականացնող առանցքային աուդիտորական գործընկերը (գործընկերները) պետք է փոխվեն ռոտացիոն կարգով: Նման ռոտացիան կազմակերպելու նպատակով անդամ պետությունները պետք է պահանջեն աուդիտի ենթարկվող անձի հետ գործ ունեցող առանցքային աուդիտորական գործընկերոջ (գործընկերների) փոփոխությունը՝ միաժամանակ թույլ տալով այն աուդիտորական կազմակերպությանը, որի հետ առանցքային աուդիտորական գործընկերը (գործընկերները) կապված է (են), մնալ նման ընկերության պարտադիր աուդիտ իրականացնող անձը: Անդամ պետությունը կարող է այլապես աուդիտորական կազմակերպության փոփոխություն պահանջել՝ չսահմանափակելով 42(2) հոդվածի գործողությունը, երբ դա նպատակահարմար է համարում՝ հետապնդվող նպատակների իրականացման համար,
- 27) կապիտալի շուկաների փոխհարաբերությունն ընդգծում է Համայնքի կապիտալի շուկայի առնչությամբ երրորդ երկրների աուդիտորների կողմից կատարված աշխատանքի բարձր որակն ապահովելու անհրաժեշտությունը: Հետևաբար, տվյալ աուդիտորները պետք է գրանցվեն, որպեսզի ենթարկվեն որակի ապահովման վերանայմանը և ստուգման ու պատժամիջոցների համակարգին: Փոխադարձության սկզբունքի վրա հիմնված շեղումները պետք է հնարավոր լինեն Հանձնաժողովի կողմից անդամ պետությունների հետ համագործակցությամբ իրականացվելիք համարժեքության փորձաքննության պայմաններում: Ամեն դեպքում, այն կազմակերպությունը, որը 2004/39/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածի 14-րդ կետի իմաստով կարգավորվող շուկաներում փոխանցելի արժեթղթեր է թողարկել, միշտ պետք է աուդիտի ենթարկվի այն աուդիտորի կողմից, որը կա՛մ գրանցված է անդամ պետությունում, կա՛մ էլ վերահսկվում է տվյալ աուդիտորի ծագման երրորդ երկրի իրավասու մարմինների կողմից՝ պայմանով, որ Հանձնաժողովը կամ անդամ պետությունը հաստատում է, որ նշված երրորդ երկիրը բավարարում է վերահսկողության սկզբունքների, որակի ապահովման համակարգի և ստուգման ու պատժամիջոցների համակարգի բնագավառներում Համայնքի պահանջներին համարժեք պահանջները, և որ այդ միջոցառումների հիմքը փոխադարձության սկզբունքն է: Մինչդեռ մեկ անդամ պետություն կարող է որևէ երրորդ պետության որակի ապահովման համակարգը համարժեք համարել, մյուս անդամ պետությունները պարտավորված չեն ընդունել այդ գնահատականը, և ոչ էլ այն կարող է գերակայություն

ունենալ Հանձնաժողովի որոշման նկատմամբ,

- 28) միջազգային համալիր աուդիտների բարդության պատճառով անդամ պետությունների և երրորդ երկրների իրավասու մարմինների միջև պատշաճ համագործակցություն է պահանջվում: Հետևաբար, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ աուդիտորական աշխատանքային փաստաթղթերը և մյուս փաստաթղթերն ազգային իրավասու մարմինների միջոցով մատչելի լինեն երրորդ երկրների իրավասու մարմիններին: Շահագրգիռ անձանց իրավունքները պաշտպանելու նպատակով և միաժամանակ այդ փաստաթղթերի մատչելիությունը բարձրացնելու համար անդամ պետություններին պետք է թույլատրվի դրանք անմիջականորեն հասանելի դարձնել երրորդ երկրների իրավասու մարմիններին՝ ազգային իրավասու մարմինների համաձայնությամբ: Մատչելիություն ապահովելու համապատասխան չափանիշներից մեկն այն է, թե արդյոք երրորդ երկրների իրավասու մարմինները համապատասխանում են Հանձնաժողովի կողմից համարժեք համարվող պահանջներին: Մինչ Հանձնաժողովի կողմից նման որոշում ընդունելը և չսահմանափակելով դրա գործողությունը՝ անդամ պետությունները կարող են գնահատել պահանջների համարժեքությունը,
- 29) 36-րդ և 47-րդ հոդվածներում նշված տեղեկությունները պետք է հրապարակվեն երրորդ երկրներ տվյալների փոխանցման կանոնների համաձայն՝ «Անձնական տվյալների մշակման ժամանակ անձանց պաշտպանության ու այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՀ հրահանգում (15) սահմանված կարգին համապատասխան,
- 30) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն՝ թիվ 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան և համապատասխան կերպով հաշվի առնելով ֆինանսական ծառայությունների մասին օրենսդրության կիրարկման վերաբերյալ Հանձնաժողովի կողմից 2002 թվականի փետրվարի 5-ին Եվրոպական պառլամենտում կատարված հայտարարությունը,
- 31) փոփոխությունների նախագծի և կիրարկող ակտերի առաջին փոխանցումից Եվրոպական պառլամենտին պետք է երեք ամիս տրվի՝ դրանք քննելու և եզրակացություն հայտնելու համար: Այնուամենայնիվ, հրատապ և պատշաճ կերպով հիմնավորված դեպքերում այդ ժամկետը պետք է հնարավոր լինի կրճատել: Եթե այդ ժամանակահատվածում Եվրոպական պառլամենտի կողմից որոշում է ընդունվում, Հանձնաժողովը պետք է վերանայի փոփոխությունների կամ ակտերի նախագծերը,
- 32) քանի որ սույն Հրահանգի նպատակները, այն է՝ պարտադիր աուդիտի նկատմամբ վստահությունն ամրապնդելու նպատակով Համայնքում պարտադիր աուդիտի որակի հետագա բարձրացման և ներդաշնակեցման ու անդամ պետությունների միջև և երրորդ երկրների հետ համագործակցությանը նպաստելու նպատակով պարտադիր աուդիտի նկատմամբ վստահությունն ավելացնելու համար աուդիտի միջազգային ստանդարտների մեկ միասնական ամբողջության կիրառումը, կրթական պահանջների թարմացումը, մասնագիտական եթիկայի նորմերի սահմանումը և անդամ պետությունների իրավասու մարմինների միջև, ինչպես նաև դրանց և երրորդ երկրների իրավասու մարմինների միջև համագործակցության տեխնիկական իրականացումը, չեն կարող բավարար չափով իրականացվել անդամ պետությունների կողմից և, հետևաբար, սույն Հրահանգի մասշտաբի ու ազդեցության պատճառով առավել լավ կիրականացվեն Համայնքի մակարդակում, Համայնքը կարող է միջոցներ ձեռնարկել՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքի համաձայն: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգը չի գերազանցում այդ նպատակների իրականացման համար անհրաժեշտ շրջանակը,

- 33) պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության և աուդիտի ենթարկվող անձի միջև հարաբերություններն ավելի թափանցիկ դարձնելու նպատակով 78/660/ԵՏՀ և 83/349/ԵՏՀ հրահանգները պետք է փոփոխվեն ու լրացվեն՝ ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում աուդիտորական վճարների ու ոչ աուդիտորական ծառայությունների դիմաց վճարների բացահայտումը պահանջելու համար,
- 34) 84/253/ԵՏՀ Հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչել, քանի որ նրանում բացակայում են համապատասխան աուդիտորական ենթակառուցվածքները, ինչպես, օրինակ, հասարակական վերահսկողությունը, կարգապահական համակարգերը և որակի ապահովման համակարգն ապահովող մի շարք համապարփակ կանոններ, և քանի որ այն, մասնավորապես, անդամ պետությունների ու երրորդ երկրների միջև կարգավորող համագործակցություն չի նախատեսում: Իրավական որոշակիություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է հստակ նշել, որ 84/253/ԵՏՀ հրահանգի համաձայն հաստատված պարտադիր աուդիտ իրականացնող անձինք կամ աուդիտորական կազմակերպությունները համարվում են հաստատված՝ սույն Հրահանգի համաձայն ,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Հոդված 1

Կարգավորման առարկան

Սույն Հրահանգը սահմանում է տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտին վերաբերող կանոնները:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. «պարտադիր աուդիտ»՝ նշանակում է տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ այնքանով, որքանով որ դա պահանջվում է Համայնքի օրենսդրությամբ.
2. «պարտադիր աուդիտ իրականացնող անձ»՝ նշանակում է այն ֆիզիկական անձը, որը որևէ անդամ պետության իրավասու մարմինների կողմից հաստատված է պարտադիր աուդիտ իրականացնելու համար՝ համաձայն սույն Հրահանգի.
3. «աուդիտորական կազմակերպություն»՝ նշանակում է որևէ իրավաբանական անձ կամ ցանկացած այլ կազմակերպություն՝ անկախ իր իրավական ձևից, որն անդամ պետության իրավասու մարմինների կողմից հաստատված է պարտադիր աուդիտ իրականացնելու համար՝ համաձայն սույն Հրահանգի.

4. «Երրորդ երկրի աուդիտորական հաստատություն»՝ նշանակում է այնպիսի հաստատություն, անկախ իր իրավական ձևից, որը երրորդ երկրում գրանցված ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ է անցկացնում.

5. «Երրորդ երկրի աուդիտոր»՝ նշանակում է այն ֆիզիկական անձը, որը երրորդ երկրում գրանցված ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ է անցկացնում.

6. «համալիր աուդիտ իրականացնող անձ»՝ նշանակում է պարտադիր աուդիտ իրականացնող անձ (անձինք) կամ աուդիտորական կազմակերպություն (կազմակերպություններ), որը համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտ է անցկացնում.

7. «ցանց»՝ նշանակում է առավել լայն այն կառուցվածքը,

– որի նպատակը համագործակցությունն է, և որին պատկանում է պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը, և

– որի նպատակն ակնհայտորեն շահույթի կամ ծախսերի բաշխումն է, կամ որն ունի ընդհանուր սեփականատիրություն, վերահսկողություն կամ կառավարում, որակի հսկողության ընդհանուր քաղաքականություն և ընթացակարգեր, ընդհանուր ձեռնարկատիրական ռազմավարություն ու ընդհանուր ապրանքանիշի կամ մասնագիտական ռեսուրսների զգալի մասի գործածություն.

8. «աուդիտորական կազմակերպության փոխկապակցված կազմակերպություն»՝ նշանակում է ցանկացած կազմակերպություն՝ անկախ իր իրավական ձևից, որը կապված է աուդիտորական կազմակերպության հետ ընդհանուր սեփականության, վերահսկողության կամ կառավարման միջոցով.

9. «աուդիտորական հաշվետվություն»՝ նշանակում է 78/660/ԵՏՀ հրահանգի 51(ա) հոդվածում և 83/349/ԵՏՀ հրահանգի 37–րդ հոդվածում նշված հաշվետվությունը, որը կազմվում է պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության կողմից.

▼B

10. «իրավասու մարմիններ»՝ նշանակում է օրենքով նշանակված այն կառույցները կամ մարմինները, որոնք պատասխանատու են պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների կամ դրանց որոշակի հայեցակետերի կարգավորման և/կամ վերահսկման համար, և, որևէ հատուկ հոդվածում «իրավասու մարմիններին» հղումը նշանակում է հղում այդ հոդվածում նշված գործառույթների համար պատասխանատու կառույցին կամ մարմնին (մարմիններին).

11. «աուդիտի միջազգային ստանդարտներ»՝ նշանակում է Աուդիտի միջազգային ստանդարտները (ԱՄՍ) և հարակից հաշվետվություններն ու ստանդարտներն այնքանով, որքանով որ դրանք առնչվում են պարտադիր աուդիտին.

12. «հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ»՝ նշանակում է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (ՀՀՄՍ), Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (ՖՀՄՍ) և հարակից Մեկնաբանումներ (Մեկնաբանումների մշտական հանձնաժողովի և Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանումների միջազգային կոմիտեի մեկնաբանումներ), այդ ստանդարտների ու հարակից մեկնաբանումների հետագա փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների Խորհրդի կողմից ընդունված հետագա ստանդարտներ ու հարակից մեկնաբանումներ.

13. «հանրային մասնակցությամբ կազմակերպություններ»՝ նշանակում է անդամ պետության իրավունքով կարգավորվող կազմակերպություններ, որոնց փոխանցելի արժեթղթերը վաճառքի են հանվում որևէ անդամ պետության կարգավորվող շուկայում՝ 2004/39/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածի 14-րդ կետի իմաստով, «Վարկային կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության նախաձեռնման ու իրականացման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի մարտի 20-ի 2000/12/ԵՀ հրահանգի (16) 1-ին հոդվածի 1-ին կետով սահմանված վարկային կազմակերպություններ, ինչպես նաև ապահովագրական կազմակերպություններ՝ 91/674/ԵՏՀ հրահանգի 2(1) հոդվածի իմաստով: Անդամ պետությունները կարող են նաև որպես հանրային մասնակցությամբ կազմակերպություններ սահմանել այլ կազմակերպությունների, օրինակ՝ հաստատությունների, որոնք հասարակական զգալի նշանակություն ունեն ելնելով իրենց գործունեության բնույթից, իրենց չափսից կամ աշխատողների թվից:

14. «կոոպերատիվ»՝ նշանակում է «Եվրոպական կոոպերատիվների կանոնադրության մասին» Խորհրդի 2003 թվականի հուլիսի 22-ի թիվ 1435/2003 կանոնակարգի (17) 1-ին հոդվածով սահմանված եվրոպական կոոպերատիվ կամ ցանկացած այլ կոոպերատիվ, որի համար Համայնքի իրավունքով պահանջվում է պարտադիր աուդիտ, ինչպես, օրինակ, 2000/12/ԵՀ հրահանգի 1-ին հոդվածի 1-ին կետով սահմանված վարկային կազմակերպությունները և 91/674/ԵՏՀ հրահանգի 2(1) հոդվածի իմաստով ապահովագրական կազմակերպությունները:

15. «պրակտիկ գործունեությամբ չգբաղվող մասնագետ»՝ նշանակում է ցանկացած ֆիզիկական անձ, որը նախքան հասարակական վերահսկողության համակարգի կարգավորման մեջ իր ներգրավվելը, առնվազն երեք տարի պարտադիր աուդիտ չի իրականացրել, աուդիտորական կազմակերպությունում ձայնի իրավունք չի ունեցել, աուդիտորական կազմակերպության վարչական կամ կառավարման մարմնի անդամ չի եղել և չի աշխատել ոչ մի աուդիտորական կազմակերպությունում կամ որևէ կերպ կապակցված չի եղել դրա հետ:

16. «առանցքային աուդիտորական գործընկեր (գործընկերներ)»՝ նշանակում է.

ա) աուդիտորական կազմակերպության կողմից աուդիտ անցկացնելու որևէ առանձին պայմանավորվածության համար նշանակված պարտադիր աուդիտ իրականացնող անձ (անձինք), որը (որոնք) հիմնականում գլխավորապես պատասխանատու է (են) աուդիտորական կազմակերպության անունից պարտադիր աուդիտն իրականացնելու համար, կամ

բ) համալիր աուդիտի դեպքում՝ առնվազն աուդիտորական կազմակերպության կողմից նշանակված, հիմնականում խմբի մակարդակով պարտադիր աուդիտն իրականացնելու համար պատասխանատու պարտադիր աուդիտ իրականացնող անձ (անձինք), ինչպես նաև հիմնականում էական մասը կազմող դուստր ընկերությունների մակարդակով պատասխանատու պարտադիր աուդիտ իրականացնող անձ (անձինք), կամ

գ) աուդիտորական հաշվետվությունը ստորագրող պարտադիր աուդիտ իրականացնող անձ (անձինք):

ԳԼՈՒԽ II

ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱՀՈՒՄԸ

Հոդված 3

Պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների հաստատումը

1. Պարտադիր աուդիտ իրականացվում է միայն պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպությունների կողմից, որոնք հաստատվում են պարտադիր աուդիտ պահանջող անդամ պետության կողմից:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է այնպիսի իրավասու մարմիններ, որոնք պատասխանատու են պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների հաստատման համար:

Որպես իրավասու մարմիններ կարող են հանդես գալ մասնագիտական ասոցիացիաներ՝ պայմանով, որ դրանք ենթակա են VIII գլխով նախատեսված հասարակական վերահսկողության համակարգին:

3. Չհակասելով 11-րդ հոդվածին՝ անդամ պետությունների իրավասու մարմինները կարող են որպես պարտադիր աուդիտ իրականացնող անձինք հաստատել միայն այն ֆիզիկական անձանց, որոնք բավարարում են առնվազն 4-րդ և 6-10-րդ հոդվածներով սահմանված պայմանները:

4. Անդամ պետությունների իրավասու մարմինները կարող են որպես աուդիտորական կազմակերպություններ հաստատել միայն այն կազմակերպություններին, որոնք բավարարում են հետևյալ պայմանները՝

ա) աուդիտորական կազմակերպությունների անունից աուդիտ իրականացնող ֆիզիկական անձինք պետք է բավարարեն առնվազն 4-րդ և 6-12-րդ հոդվածներով սահմանված պայմանները և պետք է տվյալ անդամ պետությունում որպես պարտադիր աուդիտ իրականացնող անձինք հաստատված լինեն:

բ) կազմակերպության ձայնի իրավունքների մեծամասնությունը պետք է պատկանի այն աուդիտորական կազմակերպություններին, որոնք հաստատված են որևէ անդամ պետությունում, կամ այն ֆիզիկական անձանց, ովքեր բավարարում են առնվազն 4-րդ և 6-12-րդ հոդվածներով սահմանված պայմանները: 86/635/ԵՏՀ հրահանգի 45-րդ հոդվածում նշված կոռպերատիվների և համանման կազմակերպությունների պարտադիր աուդիտի նպատակով անդամ պետությունները կարող են ձայնի իրավունքների առնչությամբ այլ հատուկ դրույթներ սահմանել:

գ) կազմակերպության վարչական կամ կառավարման մարմնի անդամների մեծամասնությունը՝ առավելագույնը մինչև 75%, պետք է լինեն աուդիտորական կազմակերպություններ, որոնք հաստատված են որևէ անդամ պետությունում, կամ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են առնվազն 4-րդ և 6-12-րդ հոդվածներով սահմանված պայմանները: Եթե այդ մարմինն ունի երկուսից ոչ ավելի անդամներ, այդ անդամներից մեկը պետք է բավարարի առնվազն այս կետում նշված պայմանները:

դ) կազմակերպությունը պետք է բավարարի 4-րդ հոդվածով սահմանված պայմանները:

Անդամ պետությունները կարող են լրացուցիչ պայմաններ սահմանել միայն (գ) կետի առնչությամբ: Այդ պայմանները պետք է համարժեք լինեն հետապնդվող նպատակներին և չպետք է հատեն խիստ անհրաժեշտության սահմանները:

Հոդված 4

Բարի համբավը

Անդամ պետությունների իրավասու մարմինները կարող են հաստատում շնորհել միայն բարի համբավ ունեցող ֆիզիկական անձանց կամ կազմակերպություններին:

Հոդված 5

Հաստատումը չեղյալ համարելը

1. Պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության հաստատումը չեղյալ է համարվում, եթե այդ անձի կամ ընկերության բարի համբավը լրջորեն վարկաբեկվել է: Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են բարի համբավի պահանջները բավարարելու նպատակով խելամիտ ժամանակահատված նախատեսել:
2. Աուդիտորական կազմակերպության հաստատումը չեղյալ է համարվում, եթե 3(4) հոդվածի (բ) և (գ) կետերով սահմանված պահանջներից որևէ մեկն այլևս չի բավարարվում: Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են այդ պահանջները բավարարելու նպատակով խելամիտ ժամանակահատված նախատեսել:
3. Եթե պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության հաստատումն ինչ-որ պատճառով չեղյալ է համարվում, չեղյալ համարող անդամ պետության իրավասու մարմինը տեղեկացնում է այդ փաստի և դրա պատճառների մասին այն անդամ պետությունների համապատասխան իրավասու մարմիններին, որտեղ պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը հաստատվել է, և որոնք, ըստ 16(1) հոդվածի (գ) կետի, գրանցված են առաջինը նշված անդամ պետությունների գրանցամատյանում:

Հոդված 6

Կրթական որակավորումները

Չհակասելով 11-րդ հոդվածին՝ ֆիզիկական անձը կարող է հաստատվել որպես պարտադիր աուդիտ իրականացնող անձ միայն այն բանից հետո, երբ նա բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար պահանջվող կամ համարժեք մակարդակ է ձեռք բերել, այնուհետև ավարտել է տեսական գիտելիքների դասընթացը, անցել է գործնական ուսուցում և հաջողությամբ հանձնել է բարձրագույն ուսումնական հաստատության՝ մասնագիտական ունակության ավարտական կամ համարժեք այլ քննություն՝ կազմակերպված կամ ճանաչված տվյալ անդամ պետության կողմից:

Հոդված 7

Մասնագիտական ունակության քննությունը

6-րդ հոդվածում նշված մասնագիտական ունակության ստուգումը պետք է երաշխավորի պարտադիր աուդիտի անցկացմանն առնչվող առարկաների վերաբերյալ տեսական

գիտելիքների պահանջվող մակարդակը և այդ գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունը: Այդ քննության առնվազն մի մասը պետք է գրավոր լինի :

Հոդված 8

Տեսական գիտելիքների ստուգումը

1. Քննության մեջ ներառված տեսական գիտելիքներին վերաբերող թեստը պետք է ընդգրկի, մասնավորապես, հետևյալ առարկաները.

ա) հաշվապահական հաշվառման ընդհանուր տեսություն և սկզբունքներ,

բ) տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստմանն առնչվող իրավաբանական պահանջներ և ստանդարտներ,

գ) հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ,

դ) ֆինանսական վերլուծություն,

ե) ծախսերի և կառավարչական հաշվառում,

զ) ռիսկի կառավարում և ներքին հսկողություն,

է) աուդիտորական և մասնագիտական հմտություններ,

ը) պարտադիր աուդիտին և պարտադիր աուդիտ իրականացնող անձանց առնչվող իրավաբանական պահանջներ և մասնագիտական ստանդարտներ,

թ) աուդիտի միջազգային ստանդարտներ,

ժ) մասնագիտական էթիկա և անկախություն:

2. Այն նաև ընդգրկում է առնվազն հետևյալ առարկաներն այնքանով, որքանով դրանք առնչվում են աուդիտին.

ա) ընկերությունների իրավունք և կորպորատիվ կառավարում,

բ) անվճարունակության և համանման ընթացակարգերի իրավունք,

գ) հարկային իրավունք,

դ) քաղաքացիական և առևտրային իրավունք,

ե) սոցիալական ապահովության և զբաղվածության իրավունք,

զ) տեղեկատվական տեխնոլոգիաներ և համակարգչային համակարգեր,

է) գործարարություն, ընդհանուր և ֆինանսների տնտեսագիտություն,

ը) մաթեմատիկա և վիճակագրություն,

թ) ընկերությունների ֆինանսական կառավարման հիմնական սկզբունքներ:

3. Հանձնաժողովը կարող է ► **M1** _____ ◀ փոփոխել այն առարկաների ցանկը, որոնք պետք է ընդգրկվեն 1-ին պարբերության մեջ նշված տեսական գիտելիքների թեստում: ► **M1** Այդ կիրարկող ակտերն ընդունելիս Հանձնաժողովը հաշվի է առնում աուդիտի և աուդիտորական մասնագիտության առաջընթացը: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը

փոփոխելու համար նախատեսված այդ ակտերն ընդունվում են 48(2ա) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան: ◀

Հոդված 9

Ազատումները

1. Շեղում կատարելով 7-րդ և 8-րդ հոդվածներից՝ անդամ պետությունը կարող է նախատեսել, որ այն անձը, ով հաջող է հանձնել բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման կամ համարժեք քննությունը, կամ 8-րդ հոդվածում նշված մեկ կամ ավելի առարկաներից բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան կամ համարժեք որակավորում ունի, կարող է ազատվել այն առարկայի տեսական գիտելիքների ստուգման թեստը հանձնելուց, որից տվյալ անձը քննություն է հանձնել կամ որակավորման աստիճան ունի:

2. Շեղում կատարելով 7-րդ հոդվածից՝ անդամ պետությունը կարող է նախատեսել, որ 8-րդ հոդվածում նշված մեկ կամ ավելի առարկաներից բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան կամ համարժեք որակավորում ունեցող անձը կարող է ազատված լինել այդ առարկաներից՝ իր տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողության ստուգման թեստը հանձնելուց, եթե նա այդ առարկաներից անցել է գործնական այնպիսի ուսուցում, որը հաստատված է պետության կողմից ճանաչված քննությամբ կամ դիպլոմով:

Հոդված 10

Գործնական ուսուցումը

1. Տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունը երաշխավորելու համար, որի վերաբերյալ թեստը ներառված է քննության մեջ, ուսուցում անցնող անձը պետք է անցնի առնվազն եռամյա գործնական ուսուցում, որը, մասնավորապես, ներառում է տարեկան ֆինանսական հաշվետվություններին և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կամ նմանատիպ ֆինանսական հաշվետվություններին վերաբերող գործնական դասընթացներ: Այդ գործնական ուսուցման առնվազն երկու երրորդը պետք է անցկացվի որևէ անդամ պետության կողմից հաստատված պարտադիր առույտ իրականացնող անձի կամ առույտորական կազմակերպության հետ:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ ամբողջ ուսուցումն անցկացվի այնպիսի անձանց կողմից, ովքեր գործնական ուսուցում անցկացնելու իրենց կարողության առումով համապատասխան երաշխիքներ են ապահովում:

Հոդված 11

Երկարաժամկետ գործնական փորձի միջոցով որակավորումը

Անդամ պետությունը կարող է որպես պարտադիր առույտ իրականացնող անձ հաստատել այն անձին, ով չի բավարարում 6-րդ հոդվածով սահմանված պայմանները, եթե նա կարող է ապացուցել, որ.

ա) կամ տասնհինգ տարի ներգրավված է եղել այնպիսի մասնագիտական գործունեության մեջ, որը նրան ֆինանսական, իրավական և հաշվապահական հաշվառման

բնագավառներում բավարար փորձառություն ձեռք բերելու հնարավորություն է տվել, և հանձնել է 7-րդ հոդվածում նշված մասնագիտական ունակությունը ստուգող քննությունը, կամ

բ) յոթ տարի մասնագիտական գործունեություն է ծավալել այդ բնագավառներում և, բացի դրանից, անցել է 10-րդ հոդվածում նշված գործնական ուսուցումը և հանձնել է 7-րդ հոդվածում նշված մասնագիտական ունակությունը ստուգող քննությունը:

Հոդված 12

Գործնական և տեսական ուսուցման գույակցումը

1. Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ 8-րդ հոդվածում նշված ոլորտներում տեսական ուսուցման տարիները հաշվվեն որպես 11-րդ հոդվածում նշված մասնագիտական գործունեությամբ զբաղվելու տարիներ՝ պայմանով, որ այդ ուսուցումը հավաստված լինի անդամ պետության կողմից հաստատված քննության միջոցով: Այդպիսի ուսուցումը չպետք է մեկ տարուց պակաս լինի և մասնագիտական գործունեության ժամանակահատվածը չի կարող նվազեցնել ավելի, քան չորս տարով:

2. Մասնագիտական գործունեության և գործնական ուսուցման ժամանակահատվածը չպետք է 10-րդ հոդվածով պահանջվող տեսական և գործնական ուսուցումների ընդհանուր ժամանակահատվածից պակաս լինի:

Հոդված 13

Շարունակական կրթությունը

Անդամ պետություններն ապահովում են, որ իրենց տեսական գիտելիքները, մասնագիտական հմտությունները և արժեքները բավարար չափով բարձր մակարդակի վրա պահելու համար պարտադիր աուդիտ իրականացնող անձանցից պահանջվի շարունակական կրթության համապատասխան ծրագրերի մասնակցել, և որ շարունակական կրթության պահանջները չբավարարելը ենթակա է 30-րդ հոդվածում նշված համապատասխան պատժամիջոցներին:

Հոդված 14

Այլ անդամ պետությունների պարտադիր աուդիտ իրականացնող անձանց հաստատումը

Անդամ պետությունների իրավասու մարմինները սահմանում են այլ անդամ պետություններում հաստատված պարտադիր աուդիտ իրականացնող անձանց հաստատման ընթացակարգերը: Այդ ընթացակարգերը չեն գերազանցում «Մասնագիտական կրթության և առնվազն երեք տարի տևողությամբ ուսուցման ավարտից հետո տրվող բարձրագույն կրթության դիպլոմների ճանաչման ընդհանուր համակարգի մասին» Խորհրդի 1988 թվականի դեկտեմբերի 21-ի 89/48/ԵՏՀ հրահանգի (18) 4-րդ հոդվածի համաձայն ընդունակությունների թեստ հանձնելու պահանջի սահմանները: Ընդունակությունների թեստը, որն անցկացվում է լեզուների մասին տվյալ անդամ պետությունում կիրառելի նորմերով թույլատրվող լեզուներից որևէ մեկով, ընդգրկում է պարտադիր աուդիտ իրականացնող անձանց համապատասխան գիտելիքները տվյալ անդամ պետության օրենքների և կանոնակարգերի մասին այնքանով, որքանով որ դրանք առնչվում են պարտադիր աուդիտին:

ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հոդված 15

Պետական ռեզիստորը

1. Յուրաքանչյուր անդամ պետությունն ապահովում է, որ պարտադիր աուդիտ իրականացնող անձինք և աուդիտորական կազմակերպությունները գրանցվեն պետական ռեզիստորում՝ 16-րդ և 17-րդ հոդվածների համաձայն:
2. Անդամ պետություններն ապահովում են, որ պարտադիր աուդիտ իրականացնող յուրաքանչյուր անձ և աուդիտորական կազմակերպություն պետական ռեզիստորում անհատական գրանցման համար ունենա: Գրանցման մասին տեղեկությունները պահվում են ռեզիստորում և հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով:
3. Պետական ռեզիստորը պարունակում է նաև 3-րդ հոդվածում նշված հաստատման, 29-րդ հոդվածում նշված որակի ապահովման համար, 30-րդ հոդվածում նշված պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների ուսումնասիրությունների ու պատժամիջոցների և 32-րդ հոդվածում նշված հասարակական վերահսկողության համար պատասխանատու իրավասու մարմինների անունները և հասցեները:
4. Անդամ պետություններն ապահովում են, որ մինչև 2009 թվականի հունիսի 29-ը պետական ռեզիստորը լիովին գործի:

Հոդված 16

Պարտադիր աուդիտ իրականացնող անձանց գրանցումը

1. Պարտադիր աուդիտ իրականացնող անձանց մասով պետական ռեզիստորում պարունակվում են առնվազն հետևյալ տեղեկությունները.
 - ա) անունը, հասցեն և գրանցման համարը,
 - բ) համապատասխան դեպքերում, այն աուդիտորական կազմակերպության (կազմակերպությունների) անունը, հասցեն, կայքէջի հասցեն և գրանցման համարը, որտեղ աշխատում է պարտադիր աուդիտ իրականացնող անձը, կամ որի հետ նա կապված է որպես գործընկեր կամ այլ կերպ,
 - գ) բոլոր մյուս գրանցումները՝ որպես այլ անդամ պետությունների իրավասու մարմինների պարտադիր աուդիտ իրականացնող անձ և որպես երրորդ երկրների աուդիտոր՝ ներառյալ գրանցվող մարմնի (մարմինների) անվանումը (անվանումները) և, համապատասխան դեպքերում, գրանցման համարը (համարները):
2. 45-րդ հոդվածի համաձայն գրանցված երրորդ երկրների աուդիտորները ռեզիստորում հստակորեն նշվում են որպես այդպիսին և ոչ որպես պարտադիր աուդիտ իրականացնող անձինք:

Հոդված 17

Աուդիտորական կազմակերպությունների գրանցումը

1. Աուդիտորական ընկերությունների մասով պետական ռեգիստրում պարունակում են առնվազն հետևյալ տեղեկությունները.

ա) անունը, հասցեն և գրանցման համարը,

բ) իրավական ձևը,

գ) կոնտակտային տվյալները, հիմնական կոնտակտային անձի անունը և, համապատասխան դեպքերում, կայքէջի հասցեն,

դ) անդամ պետության տարածքում գտնվող յուրաքանչյուր գրասենյակի հասցեն,

ե) աուդիտորական կազմակերպությունում աշխատող կամ դրանց հետ որպես գործընկեր կամ այլ կերպ ներգրավված՝ պարտադիր աուդիտ իրականացնող բոլոր անձանց անունները և գրանցման համարները,

զ) բոլոր սեփականատերերի և բաժնետերերի անուններն ու իրավաբանական հասցեները,

է) վարչական կամ կառավարման մարմնի բոլոր անդամների անունները և իրավաբանական հասցեները,

ը) համապատասխան դեպքերում՝ անդամակցությունը ցանցին և անդամ ընկերությունների ու փոխկապակցված կազմակերպությունների անվանումների և հասցեների ցանկերը, կամ էլ նշում այն մասին, թե որտեղ են այդ տեղեկությունները հասանելի հանրության համար,

թ) այլ անդամ պետությունների իրավասու մարմիններում բոլոր մյուս գրանցումները՝ որպես աուդիտորական կազմակերպություն, և երրորդ երկրներում՝ որպես աուդիտորական հաստատություն՝ ներառյալ գրանցվող հաստատության (հաստատությունների) անվանումը (անվանումները) և, համապատասխան դեպքերում, գրանցման համարը (համարները):

2. 45-րդ հոդվածի համաձայն գրանցված երրորդ երկրների աուդիտորական հաստատությունները ռեգիստրում հստակորեն նշվում են որպես այդպիսին և ոչ որպես աուդիտորական կազմակերպություններ:

Հոդված 18

Գրանցման տեղեկությունների թարմացումը

Անդամ պետություններն ապահովում են, որ պարտադիր աուդիտ իրականացնող անձինք և աուդիտորական կազմակերպությունները պետական ռեգիստրի համար պատասխանատու իրավասու մարմիններին առանց անհարկի ուշացման տեղեկացնեն պետական ռեգիստրում պարունակվող տեղեկությունների ցանկացած փոփոխության մասին: Ռեգիստրը ծանուցումից անմիջապես հետո առանց անհարկի ուշացման թարմացվում է:

Հոդված 19

Պատասխանատվությունը գրանցման տեղեկությունների համար

16-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների համաձայն՝ համապատասխան իրավասու մարմիններին տրամադրված տեղեկությունները ստորագրվում են պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպության կողմից: Եթե իրավասու մարմինը

նախատեսում է, որ տեղեկությունները պետք է մատչելի դարձվեն էլեկտրոնային տարբերակով, դա կարելի է անել, օրինակ, «Համայնքի՝ էլեկտրոնային ստորագրությունների շրջանակի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1999 թվականի դեկտեմբերի 13-ի 1999/93/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված էլեկտրոնային ստորագրության միջոցով: (19)

Հոդված 20

Լեզուն

1. Պետական ռեգիստրում գրանցված տեղեկությունները կազմվում են լեզուների մասին տվյալ անդամ պետությունում կիրառելի կանոններով թույլատրելի լեզուներից որևէ մեկով:

2. Բացի դրանից՝ անդամ պետությունները կարող են թույլատրել տեղեկությունները պետական ռեգիստրում գրանցել Համայնքի որևէ այլ պաշտոնական լեզվով (լեզուներով): Անդամ պետությունները կարող են պահանջել տեղեկությունների թարգմանության վավերացումը:

Տվյալ անդամ պետությունը բոլոր դեպքերում ապահովում է, որ ռեգիստրում նշված լինի, թե արդյոք թարգմանությունը վավերացված է, թե ոչ:

ԳԼՈՒԽ IV

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ, ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԱՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ, ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Հոդված 21

Մասնագիտական էթիկան

1. Անդամ պետություններն ապահովում են, որ պարտադիր աուդիտ իրականացնող բոլոր անձինք և աուդիտորական կազմակերպությունները ենթարկվեն մասնագիտական էթիկայի սկզբունքներին, որոնք առնվազն ընդգրկում են նրանց՝ հանրային շահին ուղղված գործառույթը, նրանց ազնվությունը և անաչառությունը, ինչպես նաև մասնագիտական ունակությունն ու անհրաժեշտ զգուշությունը:

2. Աուդիտորական գործառույթի նկատմամբ վստահելիությունը և սույն հոդվածի 1-ին պարբերության միասնական կիրառումն ապահովելու համար Հանձնաժողովը կարող է ► **M1** _____ ◀ ընդունել մասնագիտական էթիկան կարգավորող՝ սկզբունքների վրա հիմնված կիրարկող ակտեր: ► **M1** Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը ընդունվում են 48(2ա) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան: ◀

Հոդված 22

Անկախությունը և անաչառությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ պարտադիր աուդիտն իրականացնելիս պարտադիր աուդիտ իրականացնող անձը և (կամ) աուդիտորական կազմակերպությունն անկախ լինի աուդիտի ենթարկվող անձից և ընդգրկված չլինի աուդիտի ենթարկվող անձի որոշումների կայացման գործընթացում:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը պարտադիր աուդիտ չի իրականացնում, եթե պարտադիր աուդիտ իրականացնող անձի, աուդիտորական կազմակերպության կամ ցանցի և աուդիտի ենթարկվող անձի միջև առկա է ուղղակի կամ անուղղակի ֆինանսական, գործարարական, աշխատանքային կամ այլ հարաբերություն՝ ներառյալ լրացուցիչ ոչ աուդիտորական ծառայությունների մատուցումը, որից անաչառ, ողջամիտ և տեղեկացված երրորդ կողմը կարող էր եզրակացնել, որ պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության անկախությունը վտանգված է: Եթե պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության անկախության համար առկա են սպառնալիքներ, ինչպիսիք են, օրինակ, ինքնավերստուգումը, սեփական շահի առկայությունը, շահերը ներկայացնելը, քարոզչությունը, ծանոթությունը, վստահությունը կամ ահաբեկումը, պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը պետք է այդ սպառնալիքները մեղմացնելու համար երաշխիքներ կիրառի: Եթե կիրառված երաշխիքների համեմատությամբ այդ սպառնալիքների նշանակությունն այնպիսին է, որ սպառնում է պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության անկախությանը, պարտադիր աուդիտը չի իրականացվում:

Բացի դրանից՝ անդամ պետություններն ապահովում են, որ հանրային մասնակցությամբ կազմակերպությունների պարտադիր աուդիտի դեպքում և, անհրաժեշտության դեպքում, պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության անկախությունը պաշտպանելու համար, պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը ինքնավերստուգման կամ սեփական շահի առկայության դեպքերում պարտադիր աուդիտ չի իրականացնում:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունն աուդիտի աշխատանքային փաստաթղթերում հիմնավորում է իր նկատմամբ առկա բոլոր զգալի սպառնալիքները, ինչպես նաև դրանք մեղմացնելու նպատակով կիրառված բոլոր երաշխիքները:

4. Աուդիտորական գործառույթի նկատմամբ վստահությունը և սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների միասնական կիրառումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը կարող է ►M1 _____ ◀ սկզբունքների վրա հիմնված կիրարկող ակտեր ընդունել, որոնք վերաբերում են.

ա) 2-րդ պարբերությունում նշված սպառնալիքներին և երաշխիքներին,

բ) այն իրավիճակներին, որտեղ սպառնալիքների նշանակալիությունը, ինչպես նշված է 2-րդ պարբերությունում, այնպիսին է, որ սպառնում է պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության անկախությանը,

գ) 2-րդ պարբերության երկրորդ ենթապարբերությունում նշված ինքնավերստուգման կամ սեփական շահի առկայության դեպքերին, երբ պարտադիր աուդիտը կարող է իրականացվել կամ չիրականացվել:

▼M1

Առաջին ենթապարբերությունում նշված՝ լրացումների միջոցով սույն հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 48(2ա) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան:

Հոդված 23

Գաղտնիությունը և մասնագիտական գաղտնիքը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ բոլոր այն տեղեկությունները և փաստաթղթերը, որոնք հասանելի են պարտադիր աուդիտ իրականացնող անձին կամ աուդիտորական կազմակերպությանը պարտադիր աուդիտն իրականացնելիս, պաշտպանվեն գաղտնիության և մասնագիտական գաղտնիքի համապատասխան կանոններով:
2. Գաղտնիության և մասնագիտական գաղտնիքի՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպություններին վերաբերող կանոնները չեն խոչընդոտում սույն Հրահանգի դրույթների կատարումը:
3. Եթե պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը փոխարինվում է պարտադիր աուդիտ իրականացնող մեկ այլ անձով կամ մեկ այլ աուդիտորական կազմակերպությամբ, նախկին պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը նոր պարտադիր աուդիտ իրականացնող անձին կամ աուդիտորական կազմակերպությանն է տրամադրում աուդիտի ենթարկվող անձին առնչվող բոլոր համապատասխան տեղեկությունները:
4. Այն պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը, որը դադարել է զբաղվել որոշակի աուդիտ անցկացնելու առաջադրանքով, և նախկին պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը, այդ աուդիտորական առաջադրանքի առնչությամբ շարունակում են ենթարկվել 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներին:

Հոդված 24

Աուդիտորական ընկերությունների անունից պարտադիր աուդիտ իրականացնող անձանց անկախությունը և անաչառությունը

Անդամ պետություններն ապահովում են, որ աուդիտորական կազմակերպությունների սեփականատերերը և բաժնետերերը, ինչպես նաև այդպիսի կազմակերպության կամ դրա փոխկապակցված կազմակերպության վարչական, կառավարման և վերահսկիչ մարմինները չմիջամտեն պարտադիր աուդիտի իրականացմանը որևէ այնպիսի ձևով, որը կարող է վտանգել այն պարտադիր աուդիտ իրականացնող անձի անկախությունը և անաչառությունը, որն աուդիտորական կազմակերպության անունից պարտադիր աուդիտ է իրականացնում:

Հոդված 25

Աուդիտորական վճարները

Անդամ պետություններն ապահովում են պատշաճ կանոնների առկայությունը, որոնք նախատեսում են, որ պարտադիր աուդիտի վճարները.

- ա) չորոշվեն աուդիտի ենթարկվող անձին մատուցած լրացուցիչ ծառայություններով և չկրեն դրանց ազդեցությունը,
- բ) չեն կարող հիմնվել չնախատեսված հանգամանքների վրա:

ԱՌԴԴՏԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ ԵՎ ԱՌԴԴՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Հոդված 26

Աուդիտի ստանդարտները

1. Անդամ պետությունները պարտադիր աուդիտ իրականացնող անձանցից և աուդիտորական կազմակերպություններից պահանջում են պարտադիր աուդիտ իրականացնել 48(2ա) հոդվածում նշված մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգի համաձայն՝ Հանձնաժողովի ►M1 կողմից ընդունված աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: ◄ Անդամ պետությունները կարող են աուդիտի ազգային ստանդարտ կիրառել, քանի դեռ Հանձնաժողովը չի ընդունել աուդիտի միջազգային այնպիսի ստանդարտ, որը կարգավորում է նույն խնդրո առարկան: Ընդունված աուդիտի միջազգային ստանդարտներն ամբողջությամբ հրապարակվում են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում՝ Համայնքի յուրաքանչյուր պաշտոնական լեզվով:

2. Հանձնաժողովը կարող է որոշում կայացնել ►M1 _____ ◄ Համայնքում աուդիտի միջազգային ստանդարտների կիրառելիության մասին: Հանձնաժողովն ընդունում է աուդիտի միջազգային ստանդարտներ՝ Համայնքում կիրառելու համար, միայն եթե միայն դրանք.

ա) մշակվել են պատշաճ և անհրաժեշտ գործընթացով, հասարակական վերահսկողության ու թափանցիկության պայմաններում, և միջազգային մակարդակով լայնորեն ընդունված են,

բ) նպաստում են տարեկան և համախմբված ֆինանսական հաշվետվությունների ու համախմբված ֆինանսական հաշվետվությունների վստահելիության բարձր մակարդակին և բարձր որակին՝ համաձայն 78/660/ԵՏՀ հրահանգի 2(3) հոդվածով և 83/349/ԵՏՀ հրահանգի 16(3) հոդվածով սահմանված սկզբունքների, և

գ) նպաստում են եվրոպական հանրային բարօրությանը:

▼M1

Առաջին ենթապարբերության մեջ նշված՝ լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն 48(2ա) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան:

▼B

3. Անդամ պետությունները կարող են, ի լրումն աուդիտի միջազգային ստանդարտների, կամ, բացառիկ դեպքերում, դրանց որոշ մասը բացառելով, աուդիտի ընթացակարգեր կամ պահանջներ սահմանել, եթե միայն դրանք բխում են պարտադիր աուդիտի շրջանակներին առնչվող հատուկ ազգային իրավական պահանջներից: Անդամ պետություններն ապահովում են, որ աուդիտի այս ընթացակարգերը կամ պահանջները համապատասխանեն 2-րդ պարբերության (բ) և (գ) կետերով սահմանված դրույթներին, և, նախքան դրանց ընդունումը, դրանց մասին հայտնում են Հանձնաժողովին և անդամ պետություններին: Աուդիտի միջազգային ստանդարտների որոշ մասը բացառելու բացառիկ դեպքում անդամ պետություններն իրենց հատուկ ազգային իրավական պահանջների մասին, ինչպես նաև դրանք պահպանելու հիմքերի մասին հայտնում են Հանձնաժողովին և մյուս անդամ պետություններին՝ դրանց ազգային մակարդակով ընդունումից առնվազն վեց ամիս առաջ կամ, աուդիտի միջազգային ստանդարտի ընդունման ժամանակ արդեն իսկ գոյություն ունեցող պահանջների դեպքում՝ ամենաուշը աուդիտի համապատասխան միջազգային ստանդարտի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում:

4. Անդամ պետությունները կարող են տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտին առնչվող լրացուցիչ պահանջներ սահմանել 2010 թվականի հունիսի 29-ին ավարտվող ժամանակահատվածի համար:

Հոդված 27

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտը

Անդամ պետություններն ապահովում են, որ կազմակերպությունների խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի դեպքում.

ա) համալիր աուդիտ իրականացնող անձը լրիվ պատասխանատվություն կրի համախմբված ֆինանսական հաշվետվություններին վերաբերող աուդիտորական հաշվետվությունների համար,

բ) համալիր աուդիտ իրականացնող անձն իրականացնում է երրորդ երկրի աուդիտորի (աուդիտորների), պարտադիր աուդիտ իրականացնող անձի (անձանց), երրորդ երկրի աուդիտորական հաստատության (հաստատությունների) կամ աուդիտորական կազմակերպության (կազմակերպությունների) կողմից իրականացված աուդիտի վերանայում և պահպանում է իր վերանայման փաստաթղթերը՝ համալիր աուդիտի նպատակով: Համալիր աուդիտ իրականացնող անձի կողմից պահպանված փաստաթղթերն այնպիսին պետք է լինեն, որ թույլ տան համապատասխան իրավասու մարմնին համալիր աուդիտ իրականացնող անձի աշխատանքը պատշաճ կերպով վերանայելու հնարավորություն տան:

գ) եթե կազմակերպությունների խմբի որևէ բաղկացուցիչը աուդիտի է ենթարկվում երրորդ երկրի աուդիտորի (աուդիտորների) կամ աուդիտորական հաստատության (հաստատությունների) կողմից, որը 47-րդ հոդվածում նշված աշխատանքային պայմանավորվածություններ չունի, համալիր աուդիտ իրականացնող անձը պատասխանատու է, պահանջի դեպքում, երրորդ երկրի աուդիտորի (աուդիտորների) կամ աուդիտորական հաստատության (հաստատությունների) կողմից իրականացված աուդիտի աշխատանքային փաստաթղթերի՝ ներառյալ համալիր աուդիտին առնչվող աշխատանքային փաստաթղթերը հասարակական վերահսկողության մարմիններին պատշաճ հանձնելն ապահովելու համար: Նման հանձնում ապահովելու համար համալիր աուդիտ իրականացնող անձը պահպանում է այդ փաստաթղթերի պատճենը կամ, այլապես, համաձայնության է գալիս երրորդ երկրի աուդիտորի (աուդիտորների) կամ աուդիտորական հաստատության (հաստատությունների) հետ այդ փաստաթղթերը համապատասխան և անսահմանափակ կերպով ցպահանջ իրեն հասանելի դարձնելու վերաբերյալ, կամ որևէ այլ համապատասխան գործողություն է ձեռնարկում: Եթե իրավական կամ այլ արգելքներ խոչընդոտում են աուդիտի աշխատանքային փաստաթղթերի՝ երրորդ երկրի աուդիտորից համալիր աուդիտ իրականացնող անձին փոխանցումը, համալիր աուդիտ իրականացնող անձի կողմից պահվող փաստաթղթերում պետք է ապացույց ներառվի, որ նա համապատասխան ընթացակարգերի է դիմել՝ աուդիտի փաստաթղթերն օգտագործելու հնարավորություն ունենալու համար, իսկ երկրի օրենսդրությունից բխող իրավական արգելքներից այլ արգելքների դեպքում՝ այդ արգելքը հիմնավորող ապացույցներ:

Հոդված 28

Աուդիտորական հաշվետվություններ ներկայացնելը

1. Եթե աուդիտորական կազմակերպությունն իրականացնում է պարտադիր աուդիտ, աուդիտորական հաշվետվությունը ստորագրում է(են) առնվազն աուդիտորական կազմակերպության անունից պարտադիր աուդիտն իրականացնող անձը (անձինք): Բացառիկ հանգամանքներում անդամ պետությունները կարող են նախատեսել, որ այդ ստորագրությունը կարող է չբացահայտվել, եթե այդ բացահայտումը կարող է հանգեցնել որևէ անձի անձնական անվտանգությանը սպառնացող ակնհայտ և զգալի վտանգի: Ամեն դեպքում ներգրավված անձի (անձանց) անունը (անունները) պետք է հայտնի լինի (լինեն) համապատասխան իրավասու մարմիններին:

2. Անկախ 78/660/ԵՏՀ հրահանգի 51ա(1) հոդվածից, եթե Հանձնաժողովը սույն Հրահանգի 26(1) հոդվածի համաձայն աուդիտորական հաշվետվությունների ընդհանուր ստանդարտ չի ընդունել, ապա այն կարող է ►M1 _____ ◄ հաստատված աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն կազմված տարեկան և համախմբված ֆինանսական հաշվետվություններին վերաբերող աուդիտորական հաշվետվությունների ընդհանուր ստանդարտ ընդունել՝ աուդիտի գործառնության նկատմամբ հասարակության վստահությունը բարձրացնելու համար: ►M1 Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն 48(2ա) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան: ◄

ԳԼՈՒԽ VI

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հոդված 29

Որակի ապահովման համակարգերը

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ պարտադիր աուդիտ իրականացնող բոլոր անձինք և աուդիտորական կազմակերպությունները ենթարկվեն որակի ապահովման համակարգի, որն առնվազն համապատասխանում է հետևյալ չափորոշիչներին.

ա) որակի ապահովման համակարգը կազմակերպվում է այնպես, որ այն անկախ լինի վերանայվող պարտադիր աուդիտ իրականացնող անձանցից և աուդիտորական կազմակերպություններից ու ենթակա լինի VIII գլխով նախատեսված հասարակական վերահսկողությանը,

բ) որակի ապահովման համակարգի ֆինանսավորումը կայուն է և զերծ՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպությունների հնարավոր անհարկի որևէ ազդեցությունից,

գ) որակի ապահովման համակարգը բավարար միջոցներ ունի,

դ) որակի ապահովումը վերանայող անձինք պետք է պարտադիր աուդիտի և ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելու բնագավառներում համապատասխան մասնագիտական կրթություն և փորձ ունենան՝ զուգակցված որակի ապահովման վերանայման վերաբերյալ հատուկ վերապատրաստման հետ,

ե) որակի ապահովման վերանայման որոշակի առաջադրանքների համար վերանայողների ընտրությունն իրականացվում է անաչառ ընթացակարգի համաձայն, որի նպատակն է ապահովել, որ վերանայողների և վերանայվող պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության միջև շահերի բախում չլինի,

զ) որակի ապահովման վերանայման շրջանակը, որը հաստատվում է ընտրանքային աուդիտորական փաստաթղթերի պատշաճ ստուգմամբ, ներառում է աուդիտի կիրառելի

ստանդարտներին և անկախության պահանջներին համապատասխանության, օգտագործված միջոցների որակի և քանակի, գանձված աուդիտորական վճարների ու աուդիտորական կազմակերպության որակի հսկողության ներքին համակարգերի գնահատումը,

ե) որակի ապահովման վերանայման վերաբերյալ կազմվում է հաշվետվություն, որը պարունակում է որակի ապահովման վերանայման հիմնական եզրակացությունները,

ը) որակի ապահովման վերանայումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ,

թ) որակի ապահովման համակարգի ընդհանուր արդյունքները հրապարակվում են ամեն տարի,

ժ) պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը ողջամիտ ժամկետներում հետևում է որակի ապահովման վերանայման առաջարկություններին:

1. (ժ) կետում նշված առաջարկություններին չհետևելու դեպքում, պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը, համապատասխան դեպքերում, ենթարկվում է 30-րդ հոդվածում նշված կարգապահական գործողություններին կամ պատժամիջոցներին:

2. Հանձնաժողովը կարող է ►**M1** _____ ◀ ընդունել կիրարկող ակտեր՝ աուդիտի գործառույթի նկատմամբ հասարակության վստահությունը բարձրացնելու և 1-ին պարբերության (ա), (բ) և (ե)-(ժ) կետերի միասնական կիրառումն ապահովելու համար: ►**M1** Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն 48(2ա) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան: ◀

ԳԼՈՒԽ VII

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 30

Ստուգումների և պատժամիջոցների համակարգերը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ առկա լինեն պարտադիր աուդիտի ոչ համարժեք իրականացումը բացահայտելու, ուղղելու և կանխելու համար ստուգման ու պատժամիջոցների արդյունավետ համակարգեր :

2. Չհակասելով անդամ պետությունների քաղաքացիական պատասխանատվության ռեժիմներին՝ անդամ պետությունները նախատեսում են պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ կիրառվող արդյունավետ, համամասնական և տարհամոզիչ պատժամիջոցներ, եթե պարտադիր աուդիտը չի իրականացվում սույն Հրահանգի կիրարկմամբ ընդունված դրույթներին համապատասխան:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ ձեռնարկվող միջոցները և պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ պատժամիջոցները պատշաճ կերպով բացահայտվեն հանրությանը: Պատժամիջոցները ներառում են հաստատման չեղյալ համարելու հնարավորությունը:

Աուդիտորների պատասխանատվությունը

Հանձնաժողովը, մինչև 2007 թվականի հունվարի 1-ը, ներկայացնում է կապիտալի եվրոպական շուկաների վրա և պարտադիր աուդիտ իրականացնող անձանց ու աուդիտորական կազմակերպությունների ապահովագրության պայմանների վրա պարտադիր աուդիտի անցկացմանն առնչվող՝ պատասխանատվության մասին գործող ներպետական նորմերի ազդեցության վերաբերյալ հաշվետվություն՝ ներառյալ ֆինանսական պատասխանատվության սահմանափակումների օբյեկտիվ վերլուծությունը: Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, անցկացնում է հանրային լսումներ: Այդ հաշվետվության լույսի ներքո՝ Հանձնաժողովն անդամ պետություններին առաջարկություններ է ներկայացնում, եթե դա անհրաժեշտ է համարում:

ԳԼՈՒԽ VIII

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՏՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 32

Հասարակական վերահսկողության սկզբունքները

1. Անդամ պետությունները, 2–7-րդ պարբերություններով սահմանված սկզբունքների հիման վրա, մշակում են պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների հասարակական վերահսկողության արդյունավետ համակարգ:
2. Բոլոր պարտադիր աուդիտ իրականացնող անձինք և աուդիտորական կազմակերպությունները ենթակա են հասարակական վերահսկողության:
3. Հասարակական վերահսկողության համակարգը կարգավորվում է պրակտիկ գործունեությամբ չգրադվող մասնագետների կողմից, որոնք բանիմաց են պարտադիր աուդիտին առնչվող ոլորտներում: Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են տվյալ գործունեությամբ զբաղվող փոքրաթիվ մասնագետների թույլ տալ ներգրավվել հասարակական վերահսկողության համակարգի կարգավորման ընթացքում: Հասարակական վերահսկողության համակարգի կարգավորման մեջ ներգրավված անձինք ընտրվում են թեկնածությունների առաջադրման անկախ և թափանցիկ ընթացակարգին համապատասխան:
4. Հասարակական վերահսկողության համակարգը վերջնական պատասխանատվություն է կրում հետևյալ գործողությունների վերահսկողության համար.
 - ա) պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների հաստատման ու գրանցման համար,
 - բ) մասնագիտական էթիկայի ստանդարտների ընդունման և աուդիտորական կազմակերպությունների ու աուդիտի իրականացման որակի ներքին հսկողության համար, և
 - գ) շարունակական կրթության, որակի ապահովման և ստուգման ու կարգապահական համակարգերի համար:
5. Հասարակական վերահսկողության համակարգը, անհրաժեշտության դեպքում, պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ ստուգում անցկացնելու և համապատասխան գործողություններ ձեռնարկելու իրավունք ունի:

6. Հասարակական վերահսկողության համակարգը թափանցիկ է: Դրա մեջ ներառվում է տարեկան աշխատանքային ծրագրերի և գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հրապարակում:

7. Հասարակական վերահսկողության համակարգը համարժեքորեն է ֆինանսավորվում: Հասարակական վերահսկողության համակարգի ֆինանսավորումը կայուն է և զերծ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպությունների որևէ անհարկի ազդեցությունից:

Հոդված 33

Հասարակական վերահսկողության համակարգերի միջև Համայնքի մակարդակով համագործակցությունը

Անդամ պետություններն ապահովում են, որ հասարակական վերահսկողության համակարգը կարգավորող միջոցառումներն անդամ պետությունների վերահսկիչ գործունեության առումով Համայնքի մակարդակով արդյունավետ համագործակցության հնարավորություն տան: Այդ նպատակով յուրաքանչյուր անդամ պետություն, այդ համագործակցությունն ապահովելու համար, հատուկ պատասխանատու մարմին է նշանակում:

Հոդված 34

Անդամ պետությունների միջև կարգավորող միջոցառումների փոխադարձ ճանաչումը

1. Անդամ պետությունների կարգավորող միջոցառումները չեն հակասում այն անդամ պետության ներազգային կարգավորման և վերահսկողության սկզբունքներին, որտեղ հաստատված է պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը, և որը աուդիտի ենթարկվող անձի գրանցման վայրն է:

2. Համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի դեպքում այդ աուդիտը պահանջող անդամ պետությունը չի կարող գրանցման, որակի ապահովման վերանայման, աուդիտի ստանդարտների, մասնագիտական էթիկայի և անկախության վերաբերյալ պարտադիր աուդիտին առնչվող լրացուցիչ պահանջներ սահմանել մեկ այլ անդամ պետությունում հաստատված դուստր ընկերության պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության նկատմամբ:

3. Այն ընկերության դեպքում, որի արժեթղթերը վաճառքի են հանված ոչ այն անդամ պետության կարգավորվող շուկայում, որն այդ ընկերության գտնվելու վայրն է, այն անդամ պետությունը, որտեղ արժեթղթերի առքուվաճառք է իրականացվում, չի կարող գրանցման, որակի ապահովման վերանայման, աուդիտի ստանդարտների, մասնագիտական էթիկայի և անկախության վերաբերյալ պարտադիր աուդիտին առնչվող լրացուցիչ պահանջներ սահմանել այդ ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական ընկերության նկատմամբ:

Իրավասու մարմինների նշանակումը

1. Անդամ պետությունները սույն հրահանգով նախատեսված գործառույթների իրականացման նպատակով նշանակում են մեկ կամ ավելի իրավասու մարմին: Անդամ պետությունները դրանց նշանակման մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:
2. Իրավասու մարմինները կազմակերպված են այնպես, որ հնարավոր լինի խուսափել շահերի բախումից:

Մասնագիտական գաղտնիքը և անդամ պետությունների միջև կարգավորիչ համագործակցությունը

1. Անդամ պետությունների՝ հաստատման, գրանցման, որակի ապահովման, ստուգման և կարգապահության համար պատասխանատու իրավասու մարմինները համագործակցում են միմյանց հետ՝ սույն Հրահանգի համաձայն իրենց համապատասխան պարտականություններն իրականացնելու համար անհրաժեշտ դեպքերում: Անդամ պետության՝ հաստատման, գրանցման, որակի ապահովման, ստուգման և կարգապահության համար պատասխանատու իրավասու մարմիններն աջակցություն են ցուցաբերում մյուս անդամ պետությունների իրավասու մարմիններին: Մասնավորապես, իրավասու մարմինները տեղեկություններ են փոխանակում և համագործակցում են պարտադիր աուդիտի իրականացմանն առնչվող ստուգման գործընթացում:
 2. Մասնագիտական գաղտնիքի պահպանման պարտավորությունը կիրառվում է բոլոր այն անձանց նկատմամբ, ովքեր աշխատում են կամ աշխատել են իրավասու մարմիններում: Մասնագիտական գաղտնիք հանդիսացող ոչ մի տեղեկություն չի կարող բացահայտվել որևէ այլ անձի կամ մարմնի՝ բացառությամբ անդամ պետության օրենքներով, կանոնակարգերով կամ վարչական ընթացակարգերով սահմանված դեպքերում:
 3. 2-րդ պարբերությունը չի արգելում իրավասու մարմիններին գաղտնի տեղեկություններ փոխանակել: Նման ձևով փոխանակվող տեղեկությունների դեպքում գործում է մասնագիտական գաղտնիքի պահպանման պարտավորությունը, որին ենթակա են իրավասու մարմինների ներկա և նախկին աշխատակիցները:
 4. Իրավասու մարմինները, պահանջի դեպքում և առանց անհարկի ուշացման, տրամադրում են 1-ին պարբերությունում նշված նպատակի համար անհրաժեշտ ցանկացած տեղեկություն: Անհրաժեշտության դեպքում, նման պահանջով դիմումն ստացող իրավասու մարմինները, առանց անհարկի ուշացման, պահանջվող տեղեկությունները հավաքելու համար անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում: Այդ ձևով տրամադրվող տեղեկությունների դեպքում գործում է մասնագիտական գաղտնիքի պահպանման պարտավորությունը, որին ենթակա են իրավասու մարմինների՝ այդ տեղեկությունը ստացող ներկա և նախկին աշխատակիցները:
- Եթե դիմումն ստացող իրավասու մարմինը չի կարող տրամադրել պահանջվող տեղեկություններն առանց անհարկի ուշացման, այն դիմումը ներկայացնող իրավասու մարմնին տեղեկացնում է ուշացման պատճառների մասին:

Իրավասու մարմինները կարող են հրաժարվել տեղեկություններ ստանալու մասին դիմումի հիման վրա գործելուց, եթե.

ա) տեղեկությունների տրամադրումը կարող է բացասաբար ազդել դիմումն ստացող անդամ պետության ինքնավարության, անվտանգության կամ հասարակական կարգի վրա կամ խախտել ազգային անվտանգության կանոնները, կամ

բ) դիմումն ստացող անդամ պետության մարմինների մոտ արդեն այդ նույն գործողությունների և նույն պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպությունների դեմ արդեն հարուցվել են դատական վարույթներ, կամ

գ) դիմումն ստացող անդամ պետության մարմինների կողմից արդեն այդ նույն գործողությունների և նույն պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպությունների վերաբերյալ կայացվել է վերջնական որոշում:

Չհակասելով այն պարտավորություններին, որոնց նրանք ենթակա են դատական վարույթներում՝ այն իրավասու մարմինները, որոնք 1-ին պարբերության համաձայն տեղեկություններ են ստանում, կարող են օգտագործել այդ տեղեկությունները միայն սույն Հրահանգի շրջանակներում իրենց գործառնությունների իրականացման համար և այդ գործառնությունների իրականացմանը հատկապես առնչվող վարչական կամ դատական վարույթների համատեքստում:

5. Եթե իրավասու մարմինը եզրակացնում է, որ մեկ այլ անդամ պետության տարածքում սույն Հրահանգի դրույթներին հակասող գործունեություն է իրականացվել կամ իրականացվում, այն այդ եզրակացության մասին հնարավորինս որոշակիորեն տեղեկացնում է մյուս անդամ պետության իրավասու մարմնին: Մյուս անդամ պետության իրավասու մարմինը համապատասխան գործողություններ է ձեռնարկում: Այն հայտնում է տեղեկացնող իրավասու մարմնին արդյունքների և, հնարավորության սահմաններում, էական միջանկյալ զարգացումների մասին:

6. Մի անդամ պետության իրավասու մարմինը կարող է նաև պահանջել, որ մեկ այլ անդամ պետության իրավասու մարմինների կողմից վերջինիս տարածքում ուսումնասիրություն իրականացվի:

Այն կարող է նաև պահանջել, որ իր անձնակազմի մի մասին թույլատրվի ուսումնասիրության ընթացքում միանալ այդ մյուս անդամ պետության իրավասու մարմինների անձնակազմին:

Ուսումնասիրությունն իր ամբողջ ընթացքում ենթակա է այն անդամ պետության ընդհանուր հսկողությանը, որի տարածքում այն կատարվում է:

Իրավասու մարմինները կարող են հրաժարվել առաջին ենթապարբերությամբ նախատեսվածի համաձայն իրականացվելիք ուսումնասիրության դիմումի հիման վրա գործելուց, ինչպես սահմանված է առաջին ենթապարբերությամբ, կամ երկրորդ ենթապարբերությամբ նախատեսվածի համաձայն իր անձնակազմին մեկ այլ անդամ պետության իրավասու մարմնի անձնակազմի միանալու համար դիմումի հիման վրա, եթե.

ա) նման ուսումնասիրությունը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ դիմումն ստացող անդամ պետության ինքնավարության, անվտանգության կամ հասարակական կարգի վրա, կամ

բ) դիմումն ստացող անդամ պետության մարմիններում արդեն այդ նույն գործողությունների առնչությամբ և նույն անձանց դեմ հարուցվել են դատական վարույթներ, կամ

գ) դիմումն ստացող անդամ պետության մարմինների կողմից արդեն այդ նույն գործողությունների առնչությամբ այդպիսի անձանց վերաբերյալ վերջնական վճիռ է կայացվել:

7. ► **M1** _____ ◀ Հանձնաժողովը կարող է ընդունել կիրարկող ակտեր՝ իրավասու մարմինների միջև տեղեկությունների փոխանակման ընթացակարգերի վերաբերյալ համագործակցությանը և սույն հոդվածի 2-4-րդ պարբերություններով նախատեսված միջսահմանային ուսումնասիրության պայմաններին նպաստելու համար: ► **M1** Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն 48(2ա) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան: ◀

ԳԼՈՒԽ IX

ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ԱԶԱՏՈՒՄԸ

Հոդված 37

Պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպությունների նշանակումը

1. Պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը նշանակվում է բաժնետերերի կամ աուդիտի ենթարկվող անձի անդամների ընդհանուր ժողովի կողմից:
2. Անդամ պետությունները պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության նշանակման համար կարող են թույլ տալ այլընտրանքային համակարգեր կամ եղանակներ՝ պայմանով, որ այդ համակարգերը կամ եղանակները մշակված են՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության անկախությունը աուդիտի ենթարկվող անձի վարչական մարմնի գործադիր անդամներից կամ ղեկավար մարմնից:

Հոդված 38

Պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպությունների ազատումն աշխատանքից և պաշտոնաթողությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ պարտադիր աուդիտ իրականացնող անձինք կամ աուդիտորական կազմակերպություններն ազատվեն աշխատանքից միայն համապատասխան հիմքերի առկայության դեպքում: Հաշվապահական հաշվառման մեթոդների կամ աուդիտի ընթացակարգերի վերաբերյալ կարծիքների տարբերությունը աշխատանքից ազատելու համար համապատասխան հիմք չէ:
2. Անդամ պետություններն ապահովում են, որ աուդիտի ենթարկվող անձը և պարտադիր աուդիտ իրականացնող անձինք կամ աուդիտորական կազմակերպությունները տեղեկացնեն հասարակական վերահսկողության համար պատասխանատու մարմնին կամ մարմինների պարտադիր աուդիտ իրականացնող անձին կամ աուդիտորական կազմակերպությանը իրենց պաշտոնավարման ժամկետում աշխատանքից ազատելու կամ նրանց պաշտոնաթողության մասին, ինչպես նաև համապատասխան բացատրություն տան դրա պատճառների վերաբերյալ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՌԴԻՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 39

Կիրառումը չցուցակված հանրային մասնակցությամբ ընկերությունների նկատմամբ

Անդամ պետությունները կարող են ազատել հանրային մասնակցությամբ այն կազմակերպություններին, որոնք վաճառվող փոխանցելի արժեթղթեր 2004/39/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածի 14-րդ կետի իմաստով կարգավորվող շուկաներում փոխանցելի արժեթղթեր չեն թողարկել, ինչպես նաև դրանց պարտադիր աուդիտ իրականացնող անձին (անձանց) կամ աուդիտորական կազմակերպությանը (կազմակերպություններին)՝ սույն գլխի մեկ կամ ավելի պահանջներից:

Հոդված 40

Թափանցիկության վերաբերյալ հաշվետվությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ հանրային մասնակցությամբ կազմակերպությունների պարտադիր աուդիտ (աուդիտներ) իրականացնող անձինք և աուդիտորական կազմակերպությունները յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո երեք ամսվա ընթացքում իրենց համացանցային կայքերում հրապարակեն թափանցիկության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ, որոնք ներառում են առնվազն հետևյալը.

- ա) իրավական կառուցվածքի և սեփականության նկարագրությունը,
- բ) եթե աուդիտորական կազմակերպությունն ընդգրկված է ցանցում, այդ ցանցի և դրանում առկա իրավական ու կառուցվածքային համակարգերի նկարագրությունը,
- գ) աուդիտորական կազմակերպության ղեկավարության կառուցվածքի նկարագրությունը,
- դ) աուդիտորական կազմակերպության՝ որակի հսկողության ներքին համակարգի նկարագրությունը և վարչական կամ կառավարման մարմնի հաշվետվությունն իր գործունեության արդյունավետության մասին,
- ե) նշում այն մասին, թե երբ է տեղի ունեցել 29-րդ հոդվածում նշված որակի ապահովման վերջին վերանայումը,
- զ) հանրային մասնակցությամբ այն կազմակերպությունների ցանկը, որոնց համար աուդիտորական կազմակերպությունը նախորդ ֆինանսական տարվա ընթացքում պարտադիր աուդիտ է իրականացրել,
- է) աուդիտորական կազմակերպության անկախության սկզբունքի հիման վրա գործելակերպի մասին հաշվետվություն, որը նաև հաստատում է, որ անկախության սկզբունքի հետ համապատասխանության ներքին վերանայում է իրականացվել,
- ը) պարտադիր աուդիտ իրականացնող անձանց՝ 13-րդ հոդվածում նշված շարունակական կրթության առնչությամբ աուդիտորական կազմակերպության վարած քաղաքականության մասին հաշվետվություն,
- թ) աուդիտորական կազմակերպության կարևորությունը ներկայացնող ֆինանսական տեղեկություններ, ինչպես, օրինակ, ընդհանուր շրջանառությունը՝ բաժանված տարեկան

ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի համար գանձված վճարների ու այլ ֆինանսական տեղեկությունների վերաբերյալ եզրակացության տրամադրման ծառայությունների, հարկային դաշտում խորհրդատվական ծառայությունների և այլ ոչ աուդիտորական ծառայությունների համար գանձված վճարների,

ժ) գործընկերների վարձատրության համար հիմքերի վերաբերյալ տեղեկությունները:

Բացառիկ հանգամանքներում անդամ պետությունները կարող են չկիրառել (զ) կետի պահանջներն այնքանով, որքանով որ դա անհրաժեշտ է՝ որևէ անձի անձնական անվտանգությանը սպառնացող ակնհայտ և զգալի վտանգը մեղմացնելու համար:

Ըստ հանգամանքների՝ թափանցիկության վերաբերյալ հաշվետվությունն ստորագրվում է պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության կողմից: Դա կարող է կատարվել, օրինակ, 1999/93/ԵՀ հրահանգի 2(1) հոդվածով սահմանված էլեկտրոնային ստորագրության միջոցով:

Հոդված 41

Աուդիտորական կոմիտեն

1. Հանրային մասնակցությամբ յուրաքանչյուր կազմակերպություն ունի աուդիտորական կոմիտե: Անդամ պետությունը որոշում է, թե արդյոք աուդիտորական կոմիտեները պետք է կազմվեն վարչական մարմնի՝ գործադիր գործառույթներ չունեցող անդամներից և (կամ) աուդիտի ենթարկվող անձի վերահսկիչ մարմնի անդամներից և (կամ) աուդիտի ենթարկվող անձի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից նշանակված անդամներից: Աուդիտորական կոմիտեի առնվազն մեկ անդամը պետք է անկախ լինի և հաշվապահական հաշվառման և (կամ) աուդիտի բնագավառում գործելու իրավասություն ունենա:

2003/71/ԵՀ հրահանգի (20) 2(1) հոդվածի (զ) կետի չափանիշներին համապատասխանող հանրային մասնակցությամբ կազմակերպություններում անդամ պետությունները կարող են թույլ տալ, որ աուդիտորական կոմիտեին վերապահված գործառույթներն իրականացվեն վարչական կամ վերահսկիչ մարմնի՝ որպես մի ամբողջության կողմից՝ առնվազն այն պայմանով, որ եթե այդ մարմնի նախագահը գործադիր գործառույթներ ունեցող անդամ է, նա աուդիտորական կոմիտեի նախագահը չէ:

2. Չհակասելով վարչական, կառավարման և վերահսկիչ մարմինների անդամների կամ աուդիտի ենթարկվող անձի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից նշանակված այլ անդամների պարտավորություններին՝ աուդիտորական կոմիտեն, ի թիվս այլ պարտականությունների.

ա) դիտանցում է ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելու գործընթացը,

բ) դիտանցում է ընկերության ներքին հսկողության, համապատասխան դեպքերում՝ ներքին աուդիտի, և ռիսկերի կառավարման համակարգերի արդյունավետությունը,

գ) դիտանցում է տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտը,

դ) վերանայում և դիտանցում է պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության անկախությունը և, մասնավորապես, աուդիտի ենթարկվող անձին լրացուցիչ ծառայություններ մատուցելը:

3. Հանրային մասնակցությամբ կազմակերպությունում պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության նշանակման վերաբերյալ վարչական կամ վերահսկիչ մարմնի առաջարկը հիմնված է աուդիտորական կոմիտեի կարծիքի վրա:

4. Պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական կազմակերպությունը հաշվետվություն է ներկայացնում աուդիտորական կոմիտեին պարտադիր աուդիտի ընթացքում ծագած առանցքային հարցերի և, մասնավորապես, ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելու գործընթացին առնչվող՝ ներքին հսկողության էական թերությունների մասին:

5. Անդամ պետությունները կարող են թույլ տալ կամ որոշել, որ 1–4-րդ պարբերություններով սահմանված դրույթները չկիրառվեն հանրային մասնակցությամբ որևէ այնպիսի կազմակերպության նկատմամբ, որն ունի աուդիտորական կոմիտեի գործառույթներին համարժեք գործառույթներ իրականացնող մարմին, և որը ստեղծվել է ու գործում է այն անդամ պետությունում գործող դրույթներին համապատասխան, որտեղ գրանցված է աուդիտի ենթարկվելիք անձը: Նման դեպքում անձը բացահայտում է, թե որ մարմինն է իրականացնում այդ գործառույթները, և թե ինչպես է այն կազմված:

Անդամ պետությունները կարող են աուդիտորական կոմիտե ունենալու պարտավորությունից ազատել:

ա) հանրային մասնակցությամբ ցանկացած կազմակերպության, որը 83/349/ԵՏՀ հրահանգի 1-ին հոդվածի իմաստով դուստր ընկերություն է, եթե այդ կազմակերպությունը խմբի մակարդակով բավարարում է սույն հոդվածի 1–4-րդ պարբերությունների պահանջները,

բ) հանրային մասնակցությամբ ցանկացած կազմակերպության, որը կոլեկտիվ ներդրումային ընկերություն է, ինչպես սահմանված է 85/611/ԵՏՀ հրահանգի 1(2) հոդվածում: Անդամ պետությունները կարող են նաև ազատել հանրային մասնակցությամբ այն կազմակերպություններին, որոնց միակ նպատակը հանրության կողմից տրամադրված կապիտալի կոլեկտիվ ներդրումն է, որոնք գործում են ռիսկի բաշխման սկզբունքի հիման վրա, և որոնք չեն ձգտում իրենց հիմնադիր հիմնական ներդրումների նկատմամբ իրավական կամ կառավարչական վերահսկողություն ձեռք բերել՝ պայմանով, որ այդ կոլեկտիվ ներդրումային ընկերությունները լիազորված են իրավասու մարմինների կողմից և ենթակա են դրանց վերահսկմանը և որ դրանք ունեն դեպոզիտարիա, որն իրականացնում է 85/611/ԵՏՀ հրահանգով սահմանված գործառույթներին համարժեք գործառույթներ,

գ) հանրային մասնակցությամբ ցանկացած կազմակերպության, որի հիմնական գործունեությունը Հանձնաժողովի թիվ 809/2004 կանոնակարգի (ԵՀ) (21) 2(5) հոդվածով սահմանված ակտիվներով ապահովված արժեթղթեր թողարկելն է: Նման դեպքերում անդամ պետությունը կազմակերպությունից պահանջում է հանրությանը բացատրել այն պատճառները, որոնց հիման վրա այն նպատակահարմար չի համարում ունենալ ո՛չ աուդիտորական կոմիտե, ո՛չ էլ աուդիտորական կոմիտեի գործառույթները կատարող վարչական կամ վերահսկիչ մարմին,

դ) 2000/12/ԵՀ հրահանգի 1(1) հոդվածի իմաստով՝ ցանկացած վարկային կազմակերպություն, որի բաժնետոմսերի 2004/39/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածի 14-րդ կետի իմաստով առքուվաճառքի չեն հանվել որևէ անդամ պետության կարգավորվող շուկայում, և որը շարունակաբար կամ կրկնվող կերպով թողարկել է միայն պարտքային արժեթղթեր՝ պայմանով, որ այդ պարտքային արժեթղթերի ընդհանուր անվանական գումարը 100,000,000 եվրոյից ցածր է, և որ այն 2003/71/ԵՀ հրահանգի համաձայն ազդագիր չի հրատարակել:

Հոդված 42

Անկախությունը

1. Ի լրումն 22-րդ և 24-րդ հոդվածներով սահմանված դրույթների՝ անդամ պետություններն ապահովում են, որ հանրային մասնակցությամբ կազմակերպությունների պարտադիր աուդիտն իրականացնող անձինք կամ աուդիտորական կազմակերպությունները.

ա) ամեն տարի աուդիտորական կոմիտեին աուդիտի ենթարկվող հանրային մասնակցությամբ կազմակերպությունից իրենց անկախության վերաբերյալ գրավոր հաստատում ներկայացնեն,

բ) ամեն տարի աուդիտորական կոմիտեին բացահայտեն աուդիտի ենթարկվող անձին մատուցած որևէ լրացուցիչ ծառայության մասին, և

գ) աուդիտորական կոմիտեի հետ քննարկեն իրենց անկախությանը սպառնացող վտանգները և դրանք մեղմացնելու համար կիրառվող երաշխիքները, որոնք նրանք հիմնավորել են 22(3) հոդվածի համաձայն:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ պարտադիր աուդիտ իրականացնելու համար պատասխանատու հիմնական աուդիտորական գործընկերը (գործընկերները) աուդիտ անցկացնելու պայմանավորվածության կատարման ժամանակ ռոտացիոն կարգով փոխվի (փոխվեն)՝ նշանակման օրից սկսած առավելագույնը յոթ տարվա ժամանակահատվածի ընթացքում և թույլտվություն ունենա (ունենան) առնվազն երկու տարի հետո նորից մասնակցելու աուդիտի ենթարկվող այդ անձի աուդիտին :

3. Աուդիտորական կազմակերպության անունից պարտադիր աուդիտ իրականացնող անձին կամ հիմնական աուդիտորական գործընկերոջը չի թույլատրվում աուդիտի ենթարկվող անձի մոտ առանցքային կառավարող պաշտոն զբաղեցնել առնվազն երկու տարի այն պահից հետո, երբ նա՝ որպես պարտադիր աուդիտ իրականացնող անձ կամ հիմնական աուդիտորական գործընկեր, այլևս չի զբաղվում աուդիտ անցկացնելու առաջադրանքով:

Հոդված 43

Որակի ապահովումը

Հանրային մասնակցությամբ կազմակերպությունների պարտադիր աուդիտն իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպությունների մասով 29-րդ հոդվածում նշված որակի ապահովման վերանայումը կատարվում է առնվազն երեք տարին մեկ անգամ:

ԳԼՈՒԽ XI

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

Հոդված 44

Երրորդ երկրների աուդիտորների հաստատումը

1. Փոխադարձության սկզբունքի համաձայն՝ անդամ պետության իրավասու մարմինները կարող են երրորդ երկրի աուդիտորին հաստատել որպես պարտադիր աուդիտ իրականացնող անձ, եթե այդ անձն ապացույց է ներկայացրել առ այն, որ համապատասխանում է 4-րդ և 6-13-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համարժեք պահանջներին:

2. Նախքան երրորդ երկրի՝ 1-ին պարբերության պահանջները բավարարող աուդիտորին հաստատելը, անդամ պետության իրավասու մարմինները կիրառում են 14-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Հոդված 45

Երրորդ երկրի աուդիտորների և աուդիտորական հաստատությունների գրանցումն ու վերահսկողությունը

1. Անդամ պետության իրավասու մարմինները, 15–17-րդ հոդվածների համաձայն, գրանցում են երրորդ երկրի յուրաքանչյուր աուդիտորի և աուդիտորական հաստատության, որը աուդիտորական հաշվետվություն է ներկայացնում Համայնքից դուրս գրանցված այնպիսի ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, որի փոխանցելի արժեթղթերը առքուվաճառքի են հանվել այդ անդամ պետության կարգավորվող շուկայում՝ 2004/39/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածի 14-րդ կետի իմաստով՝ բացառությամբ, եթե ընկերությունը բացառապես թողարկում է որևէ անդամ պետության կարգավորվող շուկայում առքուվաճառքի հանված պարտքային արժեթղթեր՝ 2004/109/ԵՀ հրահանգի (22) 2(1)(բ) հոդվածի իմաստով, և որի անվանական արժեքը առնվազն 50 000 եվրո է կամ, պարտքային արժեթղթերի՝ այլ արժույթով արտահայտված լինելու դեպքում՝ թողարկման օրվա դրությամբ համարժեք է առնվազն 50 000 եվրոյի:

2. Կիրառվում են 18-րդ և 19-րդ հոդվածները:

3. Անդամ պետությունները երրորդ երկրի գրանցված աուդիտորներին և աուդիտորական հաստատություններին ենթարկում են իրենց՝ վերահսկողության, որակի ապահովման ուսումնասիրության և պատժամիջոցների համակարգերին: Անդամ պետությունը կարող է երրորդ երկրի գրանցված աուդիտորին կամ աուդիտորական հաստատությանն իր որակի ապահովման համակարգին չենթարկել, եթե մեկ այլ անդամ պետության կամ երրորդ երկրի որակի ապահովման համակարգը, որը գնահատվել է որպես համարժեք՝ 46-րդ հոդվածի համաձայն, նախորդ երեք տարվա ընթացքում իրականացրել է երրորդ երկրի աուդիտորի կամ աուդիտորական հաստատության որակի վերանայում:

4. Չհակասելով 46-րդ հոդվածին՝ սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված տարեկան ֆինանսական հաշվետվությունների կամ համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական հաշվետվությունները, որոնք կազմվում են անդամ պետությունում չգրանցված երրորդ երկրի աուդիտորի կամ աուդիտորական հաստատության կողմից, այդ անդամ պետությունում իրավական ուժ չունեն:

5. Անդամ պետությունը կարող է գրանցել երրորդ երկրի աուդիտորական հաստատությանը, եթե միայն.

ա) այն համապատասխանում է 3(3) հոդվածով սահմանված պահանջներին համարժեք պահանջներին,

բ) երրորդ երկրի աուդիտորական հաստատության վարչական կամ կառավարման մարմնի անդամների մեծամասնությունը բավարարում է 4–10-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համարժեք պահանջները,

գ) երրորդ երկրի աուդիտորական հաստատության անունից աուդիտ իրականացնող երրորդ երկրի աուդիտորը բավարարում է 4–10-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համարժեք պահանջները,

դ) 1-ին պարբերությունում նշված տարեկան ֆինանսական հաշվետվությունների կամ համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվում է 26-րդ հոդվածում նշված աուդիտի միջազգային ստանդարտներին, ինչպես նաև 22-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածներով սահմանված պահանջներին կամ համարժեք ստանդարտներին և պահանջներին համապատասխան,

ե) այդ աուդիտորական հաստատությունն իր համացանցային կայքում հրապարակում է թափանցիկության վերաբերյալ տարեկան հաշվետվություն, որը պարունակում է 40-րդ հոդվածում նշված տեղեկությունները, կամ էլ բավարարում է բացահայտման համարժեք պահանջները:

▼M1

6. 5(դ) պարբերության միասնական կիրառումն ապահովելու համար դրանում նշված համարժեքությունը գնահատվում է Հանձնաժողովի կողմից՝ անդամ պետությունների հետ համագործակցությամբ, և Հանձնաժողովը դրա վերաբերյալ որոշում է կայացնում՝ 48(2) հոդվածով սահմանված կարգավորող ընթացակարգի համաձայն: Անդամ պետությունները կարող են գնահատել սույն հոդվածի 5(դ) հոդվածում նշված համարժեքությունը, քանի դեռ Հանձնաժողովը նման որոշում չի կայացրել:

Այս համատեքստում Հանձնաժողովը կարող է, 22-րդ, 24-րդ, 25-րդ և 26-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան, համարժեքության ընդհանուր չափորոշիչներ սահմանելու համար նախատեսված միջոցներ ընդունել, որոնք կիրառելի են բոլոր երրորդ երկրների համար, և որոնք ազգային մակարդակով համարժեքությունը գնահատելիս գործածվում են անդամ պետությունների կողմից: Այս չափորոշիչները չեն կարող գերազանցել 22-րդ, 24-րդ, 25-րդ և 26-րդ հոդվածներով սահմանված պահանջների շրջանակը: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն 48(2ա) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան:

▼B

Հոդված 46

Շեղումը համարժեքության դեպքում

1. Անդամ պետությունները կարող են, հիմնվելով փոխադարձության սկզբունքի վրա, չկիրառել կամ փոփոխել 45-րդ հոդվածի (1) և (3) կետերի պահանջները, եթե միայն երրորդ երկրի աուդիտորները կամ աուդիտորական հաստատությունները երրորդ երկրում ենթարկվում են հասարակական վերահսկողության, որակի ապահովման ստուգման և պատժամիջոցների այնպիսի համակարգերի, որոնք բավարարում են 29-րդ, 30-րդ և 32-րդ հոդվածների պահանջներին համարժեք պահանջները:

▼M1

2. 1-ին պարբերության միասնական կիրառումն ապահովելու համար դրանում նշված համարժեքությունը գնահատվում է Հանձնաժողովի կողմից՝ անդամ պետությունների հետ համագործակցությամբ, և Հանձնաժողովը որոշում է կայացնում դրա վերաբերյալ՝ 48(2) հոդվածով սահմանված կարգավորող ընթացակարգի համաձայն: Անդամ պետությունները կարող են գնահատել սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված համարժեքությունը կամ հիմնվել այլ անդամ պետությունների կողմից կատարված գնահատման վրա, քանի դեռ Հանձնաժողովը որևէ որոշում չի կայացրել: Եթե Հանձնաժողովը որոշում է, որ սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված համարժեքության պահանջը բավարարված չէ, ապա այն կարող է թույլ տալ տվյալ աուդիտորներին և աուդիտորական հաստատություններին համապատասխան անցումային ժամանակաշրջանի ընթացքում շարունակել իրենց աուդիտորական գործունեությունը՝ համապատասխան անդամ պետության պահանջների համաձայն:

Այս համատեքստում Հանձնաժողովը կարող է, 29-րդ, 30-րդ և 32-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան, համարժեքության ընդհանուր չափորոշիչներ սահմանելու համար նախատեսված միջոցներ ընդունել, որոնք կիրառելի են բոլոր երրորդ երկրների համար, և որոնք ազգային մակարդակով համարժեքությունը գնահատելիս գործածվում են անդամ պետությունների կողմից : Այս չափորոշիչները չեն կարող գերազանցել 29-րդ, 30-րդ և 32-րդ հոդվածներով սահմանված պահանջների շրջանակը: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն՝ 48(2ա) հոդվածում նշված մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան:

▼B

3. Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին.

ա) 2-րդ պարբերությունում նշված համարժեքության վերաբերյալ իրենց գնահատականի մասին, և

բ) 1-ին պարբերության հիման վրա երրորդ երկրների հասարակական վերահսկողության, որակի ապահովման, ուսումնասիրության և պատժամիջոցների համակարգերի հետ համագործակցության պայմանավորվածությունների հիմնական տարրերի մասին:

Հոդված 47

Համագործակցություն երրորդ երկրների իրավասու մարմինների հետ

1. Անդամ պետությունները կարող են թույլ տալ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական կազմակերպություններում պահվող և իրենց կողմից հաստատված աուդիտորական աշխատանքային ու այլ փաստաթղթերի փոխանցումը երրորդ երկրի իրավասու մարմիններին՝ պայմանով, որ.

ա) այդ աուդիտորական աշխատանքային և մյուս փաստաթղթերն առնչվեն այն ընկերությունների աուդիտին, որոնք արժեթղթեր են թողարկել այդ երրորդ երկրում, կամ որոնք այդ երրորդ երկրում պարտադիր համախմբված ֆինանսական հաշվետվություն ներկայացնող խմբի մաս են կազմում,

բ) փոխանցումը տեղի ունենա տվյալ անդամ պետության իրավասու մարմինների միջոցով այդ երրորդ երկրի իրավասու մարմիններին և վերջիններիս խնդրանքով,

գ) տվյալ երրորդ երկրի իրավասու մարմինները բավարարեն 3-րդ պարբերությանը համապատասխան համարժեք հայտարարված պահանջները,

դ) տվյալ իրավասու մարմինների միջև համաձայնեցված աշխատանքային պայմանավորվածություններ գոյություն ունենան՝ հիմնված փոխադարձության սկզբունքի վրա,

ե) անհատական տվյալների փոխանցումը երրորդ երկրին համապատասխանի 95/46/ԵՀ հրահանգի IV գլխին:

2. 1(դ) պարբերությունում նշված աշխատանքային պայմանավորվածություններն ապահովում են, որ.

ա) իրավասու մարմինները աուդիտորական աշխատանքային և այլ փաստաթղթեր ստանալու պահանջի նպատակի առումով հիմնավորում ներկայացնեն,

բ) երրորդ երկրի իրավասու մարմինների՝ տեղեկություններն ստացող ներկա և նախկին աշխատակիցները ենթակա լինեն մասնագիտական գաղտնիքի պահպանման պարտավորությանը,

գ) երրորդ երկրի իրավասու մարմինները կարողանան օգտագործել աուդիտորական աշխատանքային և այլ փաստաթղթեր միայն հասարակական վերահսկողության, որակի ապահովման ու ուսումնասիրության իրենց գործառնություններն իրականացնելու համար, որոնք բավարարում են 29-րդ, 30-րդ և 32-րդ հոդվածների պահանջներին համարժեք պահանջները,

դ) պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության մոտ պահվող աուդիտորական աշխատանքային և այլ փաստաթղթեր ստանալու՝ երրորդ երկրի իրավասու մարմնի կողմից դիմումը կարողանա մերժվել.

– եթե այդ աշխատանքային և այլ փաստաթղթերի տրամադրումը բացասաբար ազդի Համայնքի կամ դիմումն ստացող անդամ պետության ինքնավարության, անվտանգության կամ հասարակական կարգի վրա, կամ

– եթե դիմումն ստացող անդամ պետության մարմիններում արդեն նույն գործողությունների առնչությամբ և նույն անձանց դեմ արդեն հարուցվել են դատական վարություններ:

▼ M1

3. 1(գ) պարբերության միասնական կիրառումն ապահովելու համար դրանում նշված համարժեքությունը գնահատվում է Հանձնաժողովի կողմից՝ անդամ պետությունների հետ համագործակցությամբ, և Հանձնաժողովը որոշում է կայացնում՝ 48(2) հոդվածով սահմանված կարգավորող ընթացակարգի համաձայն: Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ Հանձնաժողովի որոշմանը համապատասխանելու համար:

Համարժեքության նման գնահատականը հիմնվում է 36-րդ հոդվածի պահանջների կամ էապես համարժեք գործառնական արդյունքների վրա: Այս համատեքստում ձեռնարկված ցանկացած միջոց, որը նախատեսված է լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար և նպատակ ունի խթանելու համագործակցությունն անդամ պետությունների միջև, ընդունվում է 48(2ա) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան:

▼ B

4. Բացառիկ դեպքերում և շեղում կատարելով 1-ին պարբերությունից՝ անդամ պետությունները կարող են իրենց կողմից պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական կազմակերպություններին թույլ տալ աուդիտորական աշխատանքային ու այլ փաստաթղթեր փոխանցել անմիջապես երրորդ երկրի իրավասու մարմիններին՝ պայմանով, որ.

ա) այդ երրորդ երկրում իրավասու մարմինների կողմից ուսումնասիրություններ են նախաձեռնվել,

բ) փոխանցումը չհակասի այն պարտավորություններին, որոնց պարտադիր աուդիտ իրականացնող անձինք և աուդիտորական կազմակերպությունները պետք է իրականացնեն աուդիտորական աշխատանքային և մյուս փաստաթղթերն իրենց պետության իրավասու մարմիններին փոխանցելիս,

գ) այդ երրորդ երկրի իրավասու մարմինների հետ գոյություն ունեցող աշխատանքային պայմանավորվածություններ, որոնք անդամ պետության իրավասու մարմիններին այդ երրորդ երկրի աուդիտորական հաստատությունների աուդիտորական աշխատանքային և մյուս փաստաթղթերին փոխադարձ, ուղղակի հասանելիության հնարավորություն են տալիս,

դ) երրորդ երկրի՝ դիմող իրավասու մարմինը նախօրոք տեղեկացնի պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության պետության իրավասու մարմնին տեղեկություններ ստանալու համար յուրաքանչյուր ուղղակի պահանջի մասին՝ նշելով դրա պատճառները,

ե) 2-րդ պարբերությունում նշված պայմանները պահպանվում են:

5. Իրավասու մարմինների միջև համագործակցությանը նպաստելու և սույն հոդվածի 4-րդ պարբերության միասնական կիրառումն ապահովելու համար Հանձնաժողովը կարող է ► **M1** _____ ◀ նշել սույն հոդվածի 4-րդ պարբերությամբ նախատեսված բացառիկ դեպքերը: ► **M1** Լրացման միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցը պետք է ընդունվի 48(2ա) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան: ◀

6. Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են 1-ին և 4-րդ պարբերություններում նշված աշխատանքային պայմանավորվածությունների մասին:

ԳԼՈՒԽ XII

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐԸ

Հոդված 48

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե):

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածում նշված ժամկետը երեք ամիս է:

▼ M1

2ա. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով այդ որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

▼ M1

3. Մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը և այնուհետ, առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ, Հանձնաժողովը վերանայում է իր կիրարկող լիազորությունների վերաբերյալ դրույթները և այդ լիազորությունների իրականացման մասին հաշվետվություն է ներկայացնում Եվրոպական պառլամենտ ու Խորհուրդ: Հաշվետվությունը ներկայացնում է, մասնավորապես, Հանձնաժողովի կողմից սույն Հրահանգը փոփոխելու վերաբերյալ առաջարկ ներկայացնելու անհրաժեշտությունը՝ Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների համապատասխան շրջանակն ապահովելու համար: Փոփոխություն կատարելու անհրաժեշտության մասին եզրակացությանը կից տրվում է պատճառների մանրամասն բացատրություն: Անհրաժեշտության դեպքում, հաշվետվությանը կցվում է Հանձնաժողովին կիրարկող լիազորություններ վերապահող դրույթները փոփոխելու օրենսդրական առաջարկությունը:

Հոդված 49

78/660/ԵՏՀ և 83/349/ԵՏՀ հրահանգներում կատարված փոփոխությունները

1. 78/660/ԵՏՀ հրահանգում կատարվում են հետևյալ փոփոխությունները՝

ա) 43(1) հոդվածում ավելացնել հետևյալ կետը.

«15) տարեկան ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի համար պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության կողմից գանձված ընդհանուր վճարները՝ առանձին – առանձին, այլ ֆինանսական տեղեկությունների վերաբերյալ եզրակացության տրամադրման ծառայությունների համար գանձված ընդհանուր վճարները, հարկային դաշտում խորհրդատվական ծառայությունների համար գանձված ընդհանուր վճարները և այլ ոչ աուդիտորական ծառայությունների համար գանձված ընդհանուր վճարները:

Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ այս պահանջը չպետք է կիրառվի, եթե ընկերությունը ներառված է այն համախմբված ֆինանսական հաշվետվություններում, որոնց կազմումը պահանջվում է 83/349/ԵՏՀ հրահանգի 1-ին հոդվածի համաձայն՝ պայմանով որ այդ տեղեկությունները ներկայացված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:».

բ) 44-րդ հոդվածի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անդամ պետությունները կարող են 11-րդ հոդվածում նշված ընկերություններին թույլատրել իրենց հաշվետվությունների համառոտ ծանոթագրություններ կազմել՝ չներառելով 43-րդ հոդվածի (1)(5)–(12)–րդ, (14)(ա) և (15) կետերով պահանջվող տեղեկությունները: Այնուամենայնիվ, ծանոթագրությունները պետք է բացահայտեն ընդհանուր առմամբ 43(1)(6) հոդվածում բոլոր կետերի համար նշված տեղեկությունները:».

գ) 45-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. 1(բ) պարբերությունը կիրառվում է նաև 43(1)(8) հոդվածում նշված տեղեկությունների նկատմամբ:

Անդամ պետությունները կարող են 27-րդ հոդվածում նշված ընկերություններին թույլ տալ չբացահայտել 43 (1) (8) հոդվածում նշված տեղեկությունները: Անդամ պետությունները կարող են նաև 27-րդ հոդվածում նշված ընկերություններին թույլ տալ չբացահայտել 43 (1) (15) հոդվածում նշված տեղեկությունները՝ պայմանով, որ այդ տեղեկությունները տրամադրվեն «Տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի մայիսի 17-ի 2006/43/ԵՀ հրահանգի (23) 32-րդ հոդվածում նշված հասարակական վերահսկողության համակարգին՝ հասարակական վերահսկողության համակարգին՝ վերջինիս կողմից պահանջվելու դեպքում:»:

2. 83/349/ԵՏՀ հրահանգի 34-րդ հոդվածում ավելացնել հետևյալ կետը.

«16) Առանձին՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի համար պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական կազմակերպության կողմից գանձված ընդհանուր վճարները, այլ ֆինանսական տեղեկությունների վերաբերյալ եզրակացության տրամադրման ծառայությունների համար գանձված ընդհանուր վճարները, հարկային դաշտում խորհրդատվական ծառայությունների համար գանձված ընդհանուր

վճարները և այլ ոչ աուդիտորական ծառայությունների համար գանձված ընդհանուր վճարները»:

Հոդված 50

84/253/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելը

84/253/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2006 թվականի հունիսի 29-ից: Ուժը կորցրած ճանաչված հրահանգին կատարվող հղումները մեկնաբանվում են որպես հղումներ սույն Հրահանգին:

Հոդված 51

Անցումային դրույթը

84/253/ԵՏՀ հրահանգի համաձայն՝ անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից հաստատված պարտադիր աուդիտ իրականացնող անձինք կամ աուդիտորական կազմակերպությունները, նախքան 53(1) հոդվածում նշված դրույթներն ուժի մեջ մտնելը, համարվում են սույն հրահանգի համաձայն հաստատված:

Հոդված 52

Նվազագույն ներդաշնակեցումը

Պարտադիր աուդիտ պահանջող անդամ պետությունները կարող են ավելի խիստ պահանջներ սահմանել, եթե այլ բան նախատեսված չէ սույն Հրահանգով:

Հոդված 53

Փոխատեղումը

1. Մինչև 2008 թվականի հունիսի 29-ը՝ անդամ պետություններն ընդունում և հրապարակում են սույն Հրահանգի համապատասխանելու համար անհրաժեշտ դրույթները: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:
2. Երբ անդամ պետություններն ընդունում են այդ դրույթները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ, դրանց պաշտոնական հրապարակման դեպքում, ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:
3. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի այն հիմնական դրույթների տեքստը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 54

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

1) ՊՏ C 157, 28.06.2005թ., էջ 115:

2) Եվրոպական պառլամենտի 2005 թվականի սեպտեմբերի 28-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել) և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 25-ի որոշում:

3) ՊՏ L 222, 14.08.1978թ., էջ 11: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003/51/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 178, 17.07.2003թ., էջ 16):

4) ՊՏ թիվ L 193, 18.07.1983թ., էջ 1: Վերջին անգամ 2003/51/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ:

5) ՊՏ թիվ L 372, 31.12.1986թ., էջ 1: Վերջին անգամ 2003/51/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ:

6) ՊՏ թիվ L 374, 31.12.1991թ., էջ 7: Վերջին անգամ 2003/51/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ:

7) ՊՏ L 126, 12.05.1984թ., էջ 20:

8) ՊՏ C 143, 08.05.1998թ., էջ 12:

9) ՊՏ L 91, 31.03.2001թ., էջ 91:

10) ՊՏ L 191, 19.07.2002թ., էջ 22:

11) ՊՏ L 145, 30.04.2004թ., էջ 1:

12) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

13) ՊՏ L 52, 25.02.2005թ., էջ 51:

14) Փոխանցելի արժեթղթերով կոլեկտիվ ներդրումային ընկերություններին (ՓԱԿՆԸ) առնչվող օրենքների, կանոնակարգերի և վարչական դրույթների համակարգման մասին Խորհրդի 1984 թվականի դեկտեմբերի 20-ի 85/611/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 375, 31.12.1985թ., էջ 3): Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005/1/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 79, 24.03.2005թ., էջ 9):

15) ՊՏ թիվ L 281, 23.11.1995թ., էջ 31: Թիվ 1882/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 284, 31.10.2003թ., էջ 1):

16) ՊՏ L 126, 26.05.2000թ., էջ 1: Վերջին անգամ Հանձնաժողովի 2006/29/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 70, 09.03.2006թ., էջ 50):

17) ՊՏ L 207, 18.08.2003թ., էջ 1:

18) ՊՏ L 19, 24.01.1989թ. էջ 16: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001/19/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 206, 31.07.2001թ., էջ 1):

19) ՊՏ L 13, 19.01.2000թ., էջ 12:

20) «Արժեթղթերի բաց վաճառքի կամ դրանց առքուվաճառքի իրականացման դեպքում հրապարակվող ազդագրի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 4-ի 2003/71/ԵՀ հրահանգը (ՊՏ L 345, 31.12.2003թ., էջ 64):

21) ՊՏ L 149, 30.04.2004թ., էջ 1:

22) «Կարգավորվող շուկայում արժեթղթերը առքուվաճառքի հանած թողարկողներին մասին տեղեկություններին առնչվող թափանցիկության պահանջների ներդաշնակեցման մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի հրահանգ (ՊՏ L 390, 31.12.2004թ., էջ 38):

23) ՊՏ L 157, 09.06.2006թ., էջ 87: